№ 64 ԿԻՐԱԿԻ, 29 ՄԱՐՏԻ

1915
ԻՍՈՒԱՍՈՒՆՁՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 29 ՄԱՐՏԻ № 64

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ՍՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.

Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

Ներսիսեան Հայոց Հոգեւոր Դպրոցի Հոգաբարձութիւնը եւ Ուսուցչական խումբը խորին վշտով յայտնում են Դպրոցի բազմաշխատ նախկին ուսուցիչ և ընկեր՝

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԶՈՒՐԱԲԵԱՆԻ

մահը։ Մարմնի յուղարկաւորութիւնը այսօր, կիրակի, մարտի 29-ին, դէպի Վանքի աւագ-եկեղեցին, հանգուցեալի բնակարանից (Бѣлинская ул., Кирпичный пер. № 6). Թաղումը Խոջիվանքի գերեզմանատանը։

185. 2—2

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՆԱԽԿԻՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ խորին վշտով յայտնում են իրանց անմոռանալի ուսուցիչ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԶՈՀՐԱԲԵԱՆԻ

մահվան մասին։ Յուղարկաւորութիւնը այսօր, կիրակի, մարտի 29-ին, հանգուցեալի բնակարանից (Бѣлинская ул.։ Кирпичный пер. № 6) դէպի Վանքի աւագ-եկեղեցին։ Թաղումը Խոջիվանքի գերեզմանատանը։

186. 1—1

ՍՏԵՓԱՆ ՍԱՂՈՅԵԱՆՑԸ, Գէորգ քահանայ, Սարգիս և Լեոն Սաղոյեանցները, և դուստրներ՝ Օլգա Շախնազարեանը և Արուսեակ Գոգեանցը, հարսներ՝ Սրբուհի, Հայկանոյշ և Սիրանոյշ Սաղոյեանցներ գաւօր սրտի յայտնում են իրանց բարեկամներին և ծանօթներին, առաջինը իր անփոխարինելի կնոջ, երկրորդները իրանց սիրելի մօր և երրորդները իրանց սիրելի սկեսրոջ՝

ՆԱՏԱԼԻԱ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ
ՍԱՂՈՅԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ մարտի 1-ից առաւօտեան։ Մարմնի յուղարկաւորութիւնը այսօր, կիրակի, մարտի 29-ին, առաւօտեան ժամը 10-ին հանգուցեալի բնակարանից (Զանասեվիչ փող., Սվէշնի պեր. № 10) դէպի ս. Կարապետ եկեղեցին։ Թաղումը Խոջիվանքի գերեզմանատանը։

183. 2—2

Ներսիսեան Հայոց Հոգեւոր Դպրոցի Հոգաբարձութիւնը սրտով յայտնում է, որ այսօր, կիրակի, մարտի 29-ին, Վանքի աւագ-եկեղեցում պատարագից յետոյ կատարվելու է նոյն դպրոցի բարերար հանգուցեալ

ՅՈՎՍԷՓ ԷՖԷՆԴԵԱՆԻ
ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳԸ։

178. 2—2

ԱԶԴ
ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ
ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ մասնակցութեամբ յայտնի դերասանուհի տիկ. ՍԻՐԱՆՈՅՇԻ
ԱԳՐԻԼԻՑ ԿԸ ՍԿՍԻ ԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ։
Պատրաստվում են ներկայացման համար «ՄԵԼԻՔԻ ԱՂՋԻԿԸ» Լէօի վէպից փոխադր. Ս. Ագամեանի, «ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ» Ազարեանի, «ԵՒԳԻՆԷ» Շիրվանզադէի, «ՀԻՆ ԱՍՏՈՒԱԾՆԵՐ» Շանթի, «ԱՐՑՈՒՆՔԻՆ ԾՈՎ» Շահ-Պարոնի, «ՀԱՄԼԷՏ», «ՄԷԳԷԱ» և «ՕՐԼԵԱՆԻ ԿՈՅՍ»։
Ներկայացումներին մասնակցելու են՝ (այբուբենական կարգով) տ. տ. Աշխէն, Զաբէլ, Յասմիկ, Ղարախանեան, Մայուրեան, Մանուշարեան, ՍԻՐԱՆՈՅՇ, Սեւումեան, պ. պ. Իս. Ալիխանեան, Ադեան, Գրիգ-Ծալեան, Դաւիթ-Խան, Յարութիւնեան, Մանուէլեան, Միրզոյեան, Մուրադեան, Մելքոնեան, Սեւումեան, Վահրամ Փափազեան և ուրիշներ։
Առաջին անգամ կը ներկայացվի «ՄԵԼԻՔԻ ԱՂՋԻԿԸ» Լէօի անմիջական հսկողութեամբ Ս. Ագամեանի փոխադրած միակ օրինակով, մասնակցութեամբ յայտնի դերասանուհի տիկ. ՍԻՐԱՆՈՅՇԻ և ղեկավարութեամբ պ. ԼԷՕԻ։
Բեժիսսեօր՝ ՍԵՒՈՒՄԵԱՆ. Բեժ. օգնական՝ ՓԻՐՈՒՄԵԱՆ
(22,26,27,29) առ. 169. 5—5 Յուշարար՝ Զարչարեան

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Բարձր Հովանաւորութեան տակ
գ տ վ ո ղ
„Պատերազմից Վնասվածներին Օգնող Հայկական Կենտրոնական Կոմիտէն“ և ԿՈՎԿ. ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳ. ԸՆԿ., որոնք գործում են միացած, շարունակում են ընդունել նուէրներ արդարկել հետեւեալ հասցէով՝ 1) Կոմիտէի գանձապահ պ. Գ. Յուրինեանին, Тиф. Ком. Банкъ. 2) Կովկ. Հ. Բարեգ. Ընկ. Խորհրդին, Абасъ-Абадская площ., № 7. 3) «Հորիզոն»-ի խմբագրութեան, իսկ իրերը միայն՝ Կ. Հ. Բ. Ընկ. գրասենեակի հասցէով։
առ. (օ. մ.) 181. 5—3

ԱԼ. ՄԵԼԻՔ-ԱԶԱՐԵԱՆԻ ՏԱՆ ՄԷՋ
(Օլգինսկայա փողոց)
Մարտի 23-ից բացված է ՌԱԶՄԱՆԿԱՐԻՉ
Ս. Ս. ԽԱՉԱՏՐԵԱՆԻ
Պատկերների ցուցահանդէսը։
Պատկերների սիւժէները առնված են կովկասեան զօրաճակատի զինուորական դեպքերից։
Մուտքը 20 կ.։ Աշակերտների եւ զինուորների համար 10 կ.։
Զուտ հասոյթի 60%-ը փախստականների օգտին է։
Ցուցահանդէսը բաց է ամեն օր առաւ. ժամը 10-ից մինչև երեկ. ժամը 6-ը։
առ. (ա. օ.) 172. 5—5

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔ. ԿԵՆՏ. ԿՈՄԻՏԷՏ

ԹԻՖԼԻՍՈՒՄ «ՎԷՆՏԱՅԻ ՕՐ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՅԱՆՁՆԱԺՈՂՎԻ ԿՈՂՄԻՑ

ԿՈՉ

Քաղաքացիներ!

Այս ծանր օրերին, երբ մեր եղբայրները մեն-մենակ պաշտպանում են պատերազմի դաշտում մեր մեծ հայրենիքի պատիւն ու արժանաւորութիւնը, մեր կանայց, երեխաներին, հայրերին և այլոց՝ թշնամու յարձակումից, իրանց կեանքն ու առողջութիւնը զոհում են ամբողջ Ռուսաստանի ապագայ նորագոյն կեանքի համար, իսկ միւսներն էլ՝ որ յանդգնն թշնամու հետ կռուելիս ստացել են վէրքեր, տանջվում են ֆիզիքապէս։ այս օրերին, երբ ամբողջ Ռուսաստանը, հայրենասիրական ոգևորութեամբ, լարել է իր ամբողջ ոյժը օգնելու մեր քաջարի զօրքերին,—մենք ևս նոյնպէս չենք կարող և չը պէտք է անմասն մնանք այդ ընդհանուր վշտի ժամանակ։ Իւրաքանչիւրը մեզանից պէտք է մեծ պարտականութիւն զգայ օգնութեան ձեռք մեկնելու մեր փառապանծ զօրքերին և նրանց ընտանիքներին՝ ով ինչով կարող է։

Քաղաքացիներ!

Մեր զօրքերին օգնելու այդ վսեմ նպատակով՝ Թիֆլիսում «վէնտայի օր» կազմակերպող յանձնաժողովը երեքշաբթի, մարտի 31-ին, կազմակերպում է միօրեայ հանգանակութիւն բոլոր խանութներում, պահեստներում և այլ առևտրական հիմնարկութիւններում։ Այդ օրը վաճառքից դոյացած վէնտայի կոմիսիոնի դումարից 5% կը յատկացվի այդ նպատակով, որից կէսը յոգուտ Քաղաքային Կենտր. Կոմիտէի, իսկ միւս կէսը յոգուտ Թիֆլիսի Վաճառ. Լաղարէթի Կոմիտէի։

Քաղաքացիներ!

Այդ օրը գնէք՝ ով ինչ կարող է. ձեզ անհրաժեշտ իրերը գնէք հէնց այդ՝ «վէնտայի» օրը։ Իմացած եղէք, որքան աւելի լինի այդ օրվայ առևտուրը քաղաքում, նոյնքան լայն կերպով նա հնար աւորութիւն կունենայ օգնելու ցաւատանջ զօրքերին։

Մի մոռացէք, քաղաքացիներ, «վէնտայի օրը» կատարելու ձեր քաղաքացիական պարտքը։

Քաղ. Կենտ. Կոմ. նախագահ՝ Ալ. Խատիսեան
Զատկ. բազարի՝ «Կարմիր Ձու» կազմակերպող
Յանձնաժողովի նախագահ՝ Ս. Աղդանով
«Վէնտա» կազմ. Յանձնաժողովի նախագահ՝ Ար. Միլեան
(ա. օ.) առ. 188. 2—1

ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ
Բաղուի Հայ Դերասանական Ընկերակցութիւն
Պօղոս Յովհաննիսեան ԱՄԻՐԱԳՕԻ տնօրինութեան ներքոյ
Այսօր, կիրակի, մարտի 29-ին
Երկրորդ անգամ կը ներկայացվի անմահ վիպագիր Րաֆֆիի

ԽԵՆԹԸ

Դրամա, 7 պատկերով, փոխադր. Յովհ. Զարիֆեանի։
I պատկեր.—Ալաշկերտում։ Տանուտէր Խաչոյի ընտանիքը։ Քիւրդական ցեղապետ Ցաթահ-բէկի այցելութիւնը։
II պատկեր.—Պրօպագանդա հայ գիւղում։ Գաղտնիքը բացվում է։
III պատկեր.—Ինքնապաշտպանութեան հարցը և չարչի յեղափոխականը։ Լրտես հայը ազգասէրի դիմակի տակ։
IV պատկեր.—Ցեղափոխականը լրտեսի ճանկերում։ Խուզարկութիւն և թալան։
V պատկեր.—Բայազիդի բերդում։
VI պատկեր.—Գեներալ Տէր-Դաւիթեանի բանակում։ Հերոսը պարգևատրված։
VII պատկեր.—Աւերակներում։ Դաւաճանի զղջումը և նրա մահը։
Անցքը պատահում է 1877 թ. ռուս-թիւրքական պատերազմի ժամանակ։
ՎԱՐԴԱՆԻ (Խենթի) դերը կը կատարէ պ. ԶԱՐԻՖԵԱՆԸ
ԹՈՄԱՍ ԷՖԷՆԴԻՖի դերը կը կատարէ պ. ՎՐՈՑՐ
Մասնակցում են հարիւր հոգուց աւելի—զօրք, թիւրք ոստիկաններ, ժողովուրդ, քիւրդեր և ուրիշներ։
Մասնակցում է ամբողջ խումբը։ —◆— Սկիզբը երեկոյեան ժամը 8-ին։
Տեղերի գները սովորական են։ —◆— Տնօրինութեան լիազօր՝ բեժիսեօր՝ Ա. ԱՐՄԷՆԵԱՆ
Երկուշաբթի, մարտի 30-ին կը ներկայացվի
ԴԱՒԻԹ-ԲԷԿ
Րաֆֆիի վէպից, փոխադրութիւն Ց. Զարիֆեանի։
առ. 189. 1—1

ՎՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Ռտիշչեվսկայա 13, տելեֆոն 4—21.
Ընդունելութիւն թէ կանացի և թէ ճեռքին, նոյնպէս և վիրաբուժութեան կարիք ունեցող մնայուն (ստաціոնարъ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) գաղօրոք գրվելու պայմանով։
Ընդունելութիւն՝ կանացի հիւանդ. ամեն օր՝ ժ. 11—12 առ.։
Հիւանդանոցի բժիշկները
Ա. Ա. Ցարութիւնեան
Ն. Ն. Վեսելովզորով
Վ. Ա. Զակրժեվսկի
Ի. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նօվիցկիյ
Գ. Ն. Տէր-Ներսէսեան
Ա. Ռ. Փիշէր
Ս. Պ. Շահպարոնեանց
(հ. կ.) առ 970. 100—41

ԲԺԻՇԿ
Շուշանիկ Նաբարեան
(Մասնագէտ կանանց հիւանդութիւնների եւ մանկաբարձութեան)։
Ընդունում է հիւանդներին՝ (առ. ժ. 12½—2. (եր. ժ. 4—6.
Հասցէն՝ Սօլոլակ, Ռտիշչեվսկայա փ. № 1
Հեռաձայն 10—58.
(հ.հ.կ.) առ. 784. 100—32

ԱՏԱՄՆԱԲՈՑԺ
Ս. Գ. ԿԷՕՆՃԵԱՆ
պլոմբ, արհեստական ատամներ, ատամի հեռացումը առանց ցաւի։
Ընդունելութիւնը ամենայն օր.
Առաւ. 10—2 ժ.
Երկ. 4—7 ժ.
Գիշերակի օրերը 10—12.
Վերմնաօվսկայա փողոց № 1. մուտքը Ներսիսեանցից։
առ. (հ.կ.) 804. 100—97

ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԻՒՆԸ

I

Պատերազմը ծագելու օրից ռուսական ամբողջ առաջաւոր մամուլը և հասարակական կարծիքն այն միտքը արտայայտեցին, թէ պատերազմի առաջադրած համապետական և համաժողովրդական պրօբլեմների կամ խնդիրների աջող իրականացման համար անհրաժեշտ է համակուսակցական միութիւն և համագործակցութիւն բոլոր այն կազմակերպութիւնների, որոնք սպասաւորում են պատերազմից ՁՆասվածների օգտին և այս ու այն կերպ կապ ունեն պատերազմի հետ։

Ռուսաստանում ամենամեծ կազմակերպութիւններն, որոնք հանդէս եկան օգնելու պատերազմից ՁՆասվածներին, հիմնելու հիւանդանոցներ, անդական կէտեր, լազարէթներ, մատակարարելու հագուստ, կօշիկ և այլ պիտոյքներ,—հանդիսացան զեմստվօները և քաղաքային ինքնավարութիւնները։ Բնական է, որ ամեն մի զեմստվօ, ամեն մի քաղաքային ինքնավարութիւն ձգտում էր որքէ գործով, ձեռնարկով, զոհաբերութեամբ օգնել յաղթանակի գործին, թեթևացնելով, ամոքելով աղէտները, վիրաւորների, հիւանդների ցաւերը։ Սակայն որպէսզի օգնութիւնը լինի իրական, նպատակայարմար, արագ, կշռված, անհրաժեշտ էր, որ նա լինի կազմակերպված, որ բոլոր օգնող և աշխատող մարմինների մէջ լինի համերաշխութիւն, համագործակցութիւն։ Եւ ահա այդ նպատակով ստեղծվեցին երկու հզօր կազմակերպութիւններ կամ դաշնակցութիւններ, այն է՝ ռուսական քաղաքների դաշնակցութիւն և զեմստվօների դաշնակցութիւն, որոնք, կարելի է ասել, հրաշքներ են գործում։ Իսկ հրաշքներ են գործում նրա համար, որովհետև գործող ոյժերը միացեալ են, գործակցում են իրար, ունեն գործունէութեան ընդհանուր ծրագիր, որ հիմված է աշխատանքի բաժանման վրա։

Պատերազմից ՁՆասված հայ փախստականներին օգնելու համար, մեր մէջ ևս, բնականաբար, երևան եկան շատ մարմիններ։ Մեր մէջ, բնականաբար, առաջ եկաւ պահանջը՝ միանալու, կազմակերպվելու, դաշնակցութիւն, համերաշխութիւն ստեղծելու բոլոր գործող և աշխատող մարմինների միջև։ Այս պահանջը հրապարակի վրա դրեց «Մշակը» և լայն արձագանք գտաւ։ Եւ ահա Էջմիածնում գումարվեց հայ փախստականների համար գործող, աշխատող և օգնող բոլոր կազմակերպութիւնների և մարմինների ներկայացուցիչների համաժողով, որ անհրաժեշտ գտնելով միութիւնը, համագործակցութիւնը և գործունէութեան ընդհանուր ծրագիրը՝ որոշեց ստեղծել դաշնակցութիւն, հիմված աշխատանքի բաժանման վրա։ Այդ դաշնակցութիւնը հասկացվում է այնպէս, ինչպէս զեմստվօների և քաղ. ինքնավարութիւնների դաշնակցութիւններն են, այն է, ամեն մի մարմին պահում է իր անկախութիւնը, բայց իր գործունէութիւնը, անելիքը պէտք է համակերպված լինի, յարմարեցված Գլխաւոր Կարգադրիչ Յանձնաժողովի տնօրէնութիւններին։ Մենք այդ համակերպումը և յարմարեցումը այսպէս ենք հասկացել և հասկանում։ Հրապարակի վրա է դրված փախստական-գաղթականներին հայրենիք վերադարձնելու և գիւղատնտեսական օգնութիւն ցոյց տալու գործը. այժմ, դիցուք, Հայ Գիւղատն. և Տնայնագործ. Ընկերութիւնը որոշում է իր վրա վերցնել երկրագործական գործիքներ կամ սերմացու հայթայթելու գործը. դրա համար անհրաժեշտ է՝ դիցուք՝ 100,000 ռուբլի, բայց ինքն՝ Ընկերութիւնը ունի միայն 20 հազար ռուբլի։ Եւ ահա նա յայտնում

է Գլխաւոր Կարգադրիչ Ցանձնաժողովին, թէ այդ ճիւղի կազմակերպումն է վերցնում, պայմանաւորվում է նրա հետ և նրանից ստանում պակասող գումարը։ Նոյնպէս վարվում են և այլ ընկերութիւնները կամ մարմինները։ Այդպիսով, ամենքը աշխատում են ընդհանուր գործի համար, բայց բաժանելով աշխատանքը և ընդհանուր ցուցումները, ղեկավարութիւնը ստանալով Էջմիածնի Գլխ. Կարգադրիչ Ցանձնաժողովից, ուր պէտք է կենտրոնանան նուէրները և գումարները, կամ այդ գումարների հաշիւները, այսինքն դաշնակցութեան մէջ մտած մարմինները ինքնագլուխ կամ ինքնուրոյն չը պէտք է ծախսեն իրանց գումարները։

Այդպէս է հասկացվել ամենքի կողմից Էջմիածնի համագումարի ստեղծած Գլխ. Կարգադր. Ցանձնաժողովի ֆունկցիան և միսսիան։

Եւ այդ միակ միջոցն է իրագործելու այն ծրագիրը, որի համար պահանջվում է մօտ 5 միլիոն ռուբլի։

Հ. Առաքելեան

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՊԱՏԵՐԱԶՄ ԹԻՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ

ՌՈՒՍ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

27 մարտի

ԹԻՖԼԻՍ.—Պաշտօնական։ Կովկասեան զօրաբանակի շտաբի կողմից.

Ծովամերձ ուղղութեամբ մարտի 27-ին ամբողջ օրը շարունակվեց հրացանաձգութիւնը։

Արդուինի ուղղութեամբ և Օլթիից դէպի հիւսիս մեր առաջխաղացումը շարունակվում է։

Ալաշկերտի հովտում թիւրքերը փորձեցին յարձակման ենթարկել Կիչ-գեադուկի լեռնանցքը, բայց վանվեցին։

Մնացած ուղղութեամբ փոփոխութիւն չը կայ։

ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

27 մարտի

ՍՕԼՈՒՆ.— Կանոնից հաղորդում են, որ Էնվէր-փաշան եկել է Ադրիանոպոլիս և այցելել է բերդերը, որոնց վերանորոգութեամբ զբաղված են 5000 զինուոր։

(Լրագիրներից)

✦ «Н. Вр.»-ին հեռագրում են Սոֆիայից. «Ցարգրադից տեղեկացնում են, որ դժոխային մեքենայով յոդս է ցնդվել Բէյօղլու-Զէքմէջէի երկաթուղային կամուրջը։ Սուլթանական պալատը փոխադրվում է Բէյլիկ»։

✦ Հեռագրում են, որ այս օրերս թիւրքաց մի փոքրիկ յածանաւ Բոսֆորից դուրս գալիս կպել է ական և ջրասուզվել։

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Թիւրքական ութ կօրպուսներ

Նորերումս տեղական թերթերից մէկի մէջ լոյս տեսաւ մի լուր Թիւրքական նոր ութ կօրպուսների մասին, որոնք շարժվում են դէպի մեր սահմանները։

Լրագրական այս լուրը, բնական է որ, մեծ անհանգստութիւն է առաջ բերել հասարակութեան մէջ։ բոլորի առաջ նորից պատկերացան անցեալ տարվայ դեկտեմբեր 15—22-ի ծանր օրերը, երբ Սարըկամըշի շրջանում տեղի էին ունենում կռիւներ մեր փոքրաթիւ զօրամասերի և թիւրքաց կօրպուսների միջև։

Թիւրքական նոր ութ կօրպուսների մասին տեղեկութեանը միացան միաժամանակ մի քանի օր առաջ Սարըկամըշի, Օլթիի և Արդուինի շրջանում տեղի ունեցող կռիւների մասին լուրեր, որոնք և հասարակութեան մէջ խորացրին այն հաւատը, որ, ճիշդ որ մեր ռազմաճակատում մօտ օրերս սպասվում են խոշոր դէպքեր, որոնք կարող են վանդաւոր լինել մեզ համար, եթէ միայն... ճշդվի այն լուրը, թէ թիւրքերը մեր սահմանագծում կենտրոնացրել են այդչափ մեծ ոյժեր։

Քննենք այդ կարևոր հարցը՝ ճշդելու համար նրա արժէքը, հաւանականութեան չափը։

Ռուս-թիւրքական ներկայ պատերազմի հէնց սկզբից թիւրքերը մեր դէմ էին հանել իրանց 7-դ, 8-դ, 9-դ, 10-դ և 11-դ կօրպուսները, իւրաքանչիւրում 25—30,000 կուռ, որով ստացվում էր ընդհանուր թիւ 140—150,000 կուռ և՝ բացի այդ՝ քիւրդական մօտ 30—40,000 հեծելազօրք։ Այդպիսով ահա թիւրքերը պատերազմի բեմում արամադրում էին 170—200,000 կուռներ։ Հինգ ամիսների անընդհատ կռիւների մէջ թիւրքաց զօրքն ունեցաւ անասելի կորուստներ, որոնք, համաձայն ամենաարժանահաւատ աղբիւրների, հասնում էին սպանված՝ 20,000 հոգի, վիրաւորված 35,000 հոգի և գերի ընկած 25,000 հոգի։ ընդամենը կորուստ՝ 80,000 հոգի կամ 40%-ը մեր պատերազմաբեմի նրա բանակների ընդհանուր թիւ։ Եթէ հաշվենք, որ վիրաւորվածների մօտ 20%-ը կամ 7000-ը առողջանալով՝ նորից վերադարձել են իրանց մասերը, կը ստանանք, որ թիւրքերը մի շարք պարտութիւններ յետոյ այնու ամենայնիւ ունէին մօտ 100,000—125,000 զօրք։ Պարզ է, որ թիւրք կառավարութիւնը պատերազմում կորածներին, ընկածներին պէտք է փոխարինէ նորակոչիներով և պահեստի զինուորներով՝ նոր զօրահաւաքից։ Շատ հաւանական է, որ այս 4—5 ամիսներում թիւրքերը ժողոված լինեն եթէ ոչ 75,000, յամենայն դէպս ոչ պակաս քան 40,000 հոգի, որով թիւրքական զինուորական ոյժը մեր ռազմաբեմում այժմ հասնելու է մօտ 150—160 հազար հոգու կամ ըստ թիւրքական զինաբաշխման՝ 5—6 կօրպուսներիւ։ Մենք գիտենք, որ մեր կռիւներից մի քանիսում մասնակցում էին նրանց 5-դ և 1-ին կօրպուսների մասերը, որ հաշվում են մօտ 15,000 հոգի. ուրեմն՝ այստէղ թէ այնպէս թիւրքերը, չը նայած իրանց կրած մեծաքանակ կորուստներին, առաջիկայ գարնանը կարող են մեզ դէմ հանել 165—175 հազար կուռներ կամ 6—7 կօրպուսներ, թէև ոչ լրիւ կազմով։

Ինչ կասկած, որ թիւական տեսակէտից 160—170,000 կուռները մի պատկառելի ոյժ են կազմում, սակայն... Ահա այդ «սակայն»-ն է, որ գալիս է զգալի կերպով նսեմացնելու թիւրքական ռազմական ոյժերի արժէքը։ Եւ դա հետևեալն է.

Մեր բոլոր կռիւները այս պատերազմում, էլ չենք խօսում նախորդ պատերազմների մասին, անհերքելի կերպով ապացուցեցին թիւրքաց բանակի անկազմակերպ պատկերը զօրքի մասերի որակական կողմից, որով 100 հոգի կուռներից միայն 15—20 հոգին էին, որոնք կարող էին խոկական կռուող եր համարվել. մնացածները կարծես միայն թիւ լրացնելու և խիզճ հանգստացնելու նպատակով էին բեմ հանված։ Դրա պերճախօս ապացոյցները մենք ունեցանք Սարըկամըշի, Կարաուրգանի, Արդահանի և մասամբ Ալաշկերտի կռիւներում։ Դա բաւական չէ. այլ ամենից հետաքրքիրն այն է, որ երբ լաւ կազմակերպված նիզամների հետ խառնվում էին 40—60% բեդիֆներն ու քիւրդերը, դրանով առաջինների ռազմական արժանիքը իջնում էր 5—10%-ով, որովհետև թալանչիների, ծերերի, անվարժների կամ ջահելների այդ ամբոխը միայն անկարգութիւն էր մտցնում ընդհանուր բանակի մէջ, մանաւանդ կռիւների շրջանում։

Եւ ահա այս բանը մեր քաջարի զօրքի մէջ կամ, ինչպէս նա ամենայն իրաւամբ անուանվել է, «կովկասեան արծիւների» մէջ նոյնիսկ նրա ամենաառաջաւոր զօրպատների կողմից հաւի է առնվել՝ «մեր մէկը նրանց տասի դէմ» օրէնք դարձած հաշվով։ Ուստի ամէն անգամ, երբ մերոնք լսում էին, որ իրանց դէմ գալիս են թիւրքաց, դիցուք, 10 բատալիոններ, մերոնք ուղարկում էին մի բատալիոն, հաւատացած՝ որ դրանով ոչ միայն կարելի է հաւասարակշռել, այլ և գերակշռել հակառակորդին։

Եւ, երևակայեցէք, այս հաշիւը մեզ դրեթէ ոչ մի տեղ չի խաբել, չի սխալեցրել։

Մենք այլ ևս չենք խօսում թիւրքական ռազմամթերքի, թնդանօթների, օդոլի սուսկալի կրակոցների մասին, որոնք չեն լրացված և որոնք կազմում են իւրաքանչիւր պատերազմի ամենաէական մասը։

Ահա թէ ինչու, եթէ նոյնիսկ ճիշդ էլ լինի թիւրքական ութ կօրպուսների լուրը, այնու ամենայնիւ նրանք Սարըկամըշ—Կարաուրգանի մօտ մեր ունեցած փորձերից յետոյ, ոչ մի վախի առիթ տալ մեզ չեն կարող, քանի որ այդ ութ կօրպուսների դէմ մենք ունենք թէ թիւական և թէ մասնաւանդ յատկութեան կողմից այնքան ոյժեր, որ թիւրքական բանակը մեզ համար դառնում է, ճիշդ որ, մի արհամարհելի մեծութիւն, որի արժէքը մենք շատ լաւ գիտենք։

Սա եապօնական պատերազմի «գլխարկներով կը ճխլենք» հպարտ դարձուածը չէ, ոչ, այլ մի եղրակացութիւն, որը արդիւնք է թիւրքերի հետ այս պատերազմում ունեցած մեր աւելի քան 45 կռիւների, երբ նրանք եղել են անհամեմատ աւելի լաւ պայմաններում և քանակի գերազանց ոյժերով և սակայն միշտ էլ ամօթապարտ յաղթվել են մեր զօրքից։

Այս մեծ փորձառութիւնը և փառաւոր մօտաւոր անցեալն ունենալով աչքի առաջ, մենք կարող ենք այսօր ամենայն վստահութեամբ կրկնել մեր գեներալներից մէկի կլասիքական ասացուածքը թէ՝ «մեզ չէ հետաքրքրում, թէ որքան է թշնամին, այլ ասացէք՝ ուր է նա»։

Եւ ահա այդ թշնամուն է փնտռում և նրա հետ մօտակայ գարնանը պայքարելու տենչում մեր քաջարի զօրքը ռազմաբեմի բոլոր կէտերում, հէնց որ իր հրամանատարից առաջխաղացութեան մասին հրաման կը ստանայ։

Ա. Երկաթ

ԹԱԼԱՆՆ ՈՒ ԿՈՏՈՐԱԾԸ ԱՐԴՈՒԻՆՈՒՄ

Բաթում, 22 մարտի

Արդուինի վերագրաւումը մեր զօրքերի կողմից՝ ցնծութեամբ ու օգնորութեամբ լցրեց բաթումցիների սրտերը։ Նոյն իսկ՝ այն սրտաճմլիկ ու ազիողորմ մանրամասնութիւնները, որ սարսռ հաղորդում են, չընկճեց նրա բարձր տրամադրութիւնը։ Արդուինից եկած երկու պատանիներ պատմում են, թէ երբ թիւրքերը մտան քաղաք, անմիջապէս սկսեցին իրանց անզուգական արհեստը՝ թալանն ու մարդասպանութիւնը։ Խանութների մէջ եղած բոլոր իրերը թալանելուց բացի՝ տարել են տների մէջ գտնված աչքի ընկնող բոլոր իրերը։ Երբ թիւրքերը պահանջել են փողերն էլ յանձնել, սպառնալով բոլորին կոտորել, ազգաբնակութիւնն անմիջապէս հաւաքել է կանանց բոլոր զարդարանքներն ու յանձնել նրանց։

Բարբարոսներն ապա սկսել են ջոկել մարդկանց և սպանել են մօտաւորապէս 20—30 մարդ։ Ապա, սա քիչ համարելով, ջոկել են էլի մօտաւորապէս 20 հոգի՝ աչքի ընկնող մարդկանցից ու իրանց հետ տարել գերի։ Ինչպէս սպանվածների, այնպէս և գերի տարվածների ցուցակը ձեզ հաղորդել եմ արդէն։

Կոնայք գերծ են մնացել բարբարոսների ձեռքից, հազար ու մի ծակ ու ծուկ մտնելով։ Պատմում են, թէ Կարապետ վ. Տիրլուգեանը մեծ ջանք է գործ դրել կոտորածը ընդհանուր չը դարձնելու համար։

Տուները չեն հրդեհված, բացի մի երկու պատահական կերպով այրվածներից։

Մեր զօրքերը՝ ճնշելով թշնամուն՝ աւելի խորն են գնացել նախկին սահմանից։

Վ. Մարտիրոսեան

ՀԱՄԱԾԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

27 մարտի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Կարպատներում մեր զօրքերը վանեցին գերմանացիների և աւստրիացիների բազմաթիւ հակայարձակումները և շարունակեցին առաջանալ։ Ներկայումս մեր ձեռքումն է ամբողջ գլխաւոր լեռնաշղթան աւելի քան 110 վերստ երկարութեամբ, սկսած Ռեգետօվօյի մօտից մինչև Վօլօսատէ, բացի մի՝ 909 մետր բարձրութիւն ունեցող տեղից՝ Վօլիա Միխօվայից դէպի հարաւ։

Մարտի 25-ին մենք գերեցինք 1200 հոգի։

Մրսում է—արև ուզում.
Նստած է հեռու դրսում
Անխօս և մեղմ-հնազանդ։

Եւ ծեր է մայրս այնքան,
Փոքրիկ է—բարի մի մայր...
Ցոլում է սարը սուրսայր,
Երգում է զանգը լալկան...

Վահան Տէրեան

ՄԱԿԱՐՆԵՐ

Մի կիրակի երեկոյ 4 դերձակ և դպակար տղերք քաղաքի փողոցները երկար չափչփելուց և նրա չունեցած արժանիքները դիտելուց յետոյ գնացին եկեղեցի, որտեղ կատարվում էր քաղաքի մի շատ հարուստ զոյգի պսակադրութեան հանդէսը։

Ինչպէս անել, որ իրանք էլ մասնակցէին այդ հարսանիքին։ Երկար գլուխ կոտրելու և խելքի զօր տալու կարիք չը կար։ Հարց ու փորձից նրանք տեղեկացան, որ աղջկայ կողմի մակարները հրաւիրված են տղի տունը։

— Աղջկայ կողմը կը կարծի՝ տղի կողմից ենք, տղի կողմը կը կարծի՝ աղջկայ կողմից ենք,—ասացին մեր տղերքը և եկեղեցուց խառնվելով հարսանիքաւորներին՝ առաջ փառաջ գնացին տղի տունը։

Հետևելով միւս հանդիսականների օրինակին, նրանց առաջին գործը եղաւ վերցնել մի մի շամպայնի գաւաթ և մօտենալով նորահարսին ու նորափեսային՝ բաժակ զարկել և շնորհաւորելով նրանց սուրբ ամուսնութիւնը և երկար, բաղդաւոր կեանք բաղձանքներ գրելով՝ ցանկալ նրանց, դեռ տարին չը բոլորած, մի զոյգ տուիծ, արու զաւակ ունենալ։

Դիսերտի սեղանը նրանց առանձին չը գրաւեց, և նրանք լուրջ կերպով և առանց ախորժակները ի չարը գործադրելու՝ շատ քիչ բան դրին բերանները և, սրբելով պուշները, համեստաբար քաշվեցին պատի տակ։

Պարերի ժամանակ ծափ տուին և պահեցին իրանց ամենավայելուչ կերպով և առանց մի օրէք կասկած յարուցանելու։

Ընթրիքի ժամանակ սեղան նստեցին և այստեղ ահա չափաւորութեան շրջանակը կոտրեցին և, չը կարողանալով ախորժակները սանձահարել, սկսեցին կուշտ ուտել և մանաւանդ ագահաբար խմել։

Շատով թանգագին գինիներն ունեցան իրանց ազդեցութիւնը. նրանց գլուխները տաքացան. և որովհետև արդէն բոլորովին իրանց ազատ զգալով բաւականաչափ ընտելացել էին այդ՝ իրանցից բարձր հասարակութեան, սկսեցին կենացներ առաջարկել։ Ցետոյ անցան և հետևեալ կենացների վրա ճառեր էլ ասացին և աւելի հեռուն գնալով նոյնիսկ երգեցին էլ։

Եւ որպէսզի տանտիրոջն աւելի լաւ պատուած լինեն, սկսեցին օտա էլ կանչել։ Ցետոյ՝ կապները բոլորովին բաց թողնելով՝ արդէն հրամայեցին երաժիշտներին նուագել իրանց սիրած ասիական եղանակներ և ծափ տալով մէկ-մէկ մէջտեղ ընկնելով սկսեցին այս ու այն հիւրի առաջ իրանց մարմնի զանազան մասերը ծռմռտելով կոմիքական սօլօ պարեր պարել։

Ցետոյ՝ արդէն բանը այնտեղ հասցրին, որ, շրջապատողներին անուշադիր թողնելով, խնճոյքի կենտրոնը բոլորովին իրանք դարձան...

Երբ այդպէս արդէն բոլորովին համը տարան, հանդիսականների մէջ մի լուռ փսփսուկ ընկաւ։

Բանները պարզվեցին։

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՈ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

26—27 մարտի

ՊԱՐԻԶ.—Պաշտօնապէս յայտարարվում է, որ Բէլգիայում, Էն գետի հովտում և Ռէյմսից դէպի արևելք տեղի էին ունենում թնդանօթային կռիւներ։ Վոգէզներում յորդ անձրևներից գետինը դարձել է անանցանելի ցեխ, որ դժուարացնում է թնդանօթների տեղափոխութիւնը և արգելք է լինում ռումբերին պայթել։ Մեր զօրքերը մնացին իրանց բոլոր դիրքերում։ Էպարժի մօտ գերմանացիների բոլոր հակայարձակումները վանվում են թշնամու համար խոշոր կորուստներով։ Միայն մի տեղում Էպարժի մօտ մենք հաշուեցինք գերմանացիների 1000-ից աւելի դիակ։

ՊԱՐԻԶ. — Հաւասի գործակալութիւնը յայտնում է.

«Համաձայն հրատարակված պաշտօնական տուեալների, արևելեան արշաւախմբի տեղափոխութիւնը գեներալ Դամադի հրամանատարութեամբ կատարվեց ամենանպաստաւոր պայմաններում։ Մարտի 2-ից զօրաբանակը պատրաստ էր օգնութիւն ցոյց տալ դաշնակից նաւատորմին և բրիտանական արշաւախմբին, սակայն մինչև համապատասխան բոպէի հասնելը անհրաժեշտ հանդիսացաւ ըստ հնարաւորութեան կարճել զօրքերի կանգառնումը նաւերի վրա, և այդ նպատակով ընդունվեց Եգիպտոսի առաջարկած հիւրընկալութիւնը։ Ֆրանսիական զօրքերը ցամաք իջան Ալէքսանդրիայում և բանակեցին Ալէքսանդրիայի մօտ՝ Բամլէում։ Այստեղ զօրքերը հնարաւորութիւն ունեն հանգստանալ և կատարելագործել իրանց կազմակերպութիւնը։ Ներկայումս զօրաբանակը կարող է առանց յապաղման ուղարկվել ցանկալի ուղղութեամբ, ուր էլ որ անհրաժեշտութիւն ներկայանայ»։

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

26—27 մարտի

ՊԱՐԻԶ.—Արտաքին գործերի սենատական մասնաժողովը իր նիստում, Բուրժուայի նախագահութեամբ, լսեց Դէլկասսէի և Օռանիէրի զեկուցումները՝ Բալկանների և Դարդանէլի հարցերի մասին և Վիլսոնի նօտան՝ այն միջոցների մասին, որ Անգլիան և Ֆրանսիան ձեռք են առել տնտեսական պաշարումը ապահովելու առիթով։

ՀՌՕՄ.—Ցերեկով եկաւ գեներալ Պոն և ընդունվեց Ֆրանսիական դեսպանատան պաշտօնեաներից։ Ամբոխը գեներալին օվացիա սարքեց և տիպեց նրան դուրս գալ հիւրանոցի պատշգամբը։ Լսվեցին ողջոյնի բացագանչութիւններ ի պատիւ Ֆրանսիայի։

Ազգային-լիբերալ, ազգայնական, դեմոկրատ-սոցիալիստական, արմատական և սոցիալ-բարեկարգչական կուսակցութիւնների, նաև միջամտութեան ազգային կոմիտէների, միջամտութեան կանանց կոմիտէի և Դալմատինի կոմիտէի ներկայացուցիչները միացեալ նիստում որոշեցին հիմնել ազգային կոմիտէ, որի խնդիրը լինելու է ուժեղացնել ագիտացիան՝ օրէնքի կառավարութիւնը կարուկ վճիռ կայացնէ յանուն ժողովրդի գերագոյն շահերի։

ՄԻՆՍԿ.—Մարտի 19—27 անց են կացրել Պերեմիշլի մօտ և Կարպատներում վերցված գերիներից 89 օֆիցէր և 50,297 զինուոր։

Նորապսակի հայրը, որ պատկառելի հասակով մի պատուաւոր և յայտնի քաղաքացի էր, մօտեցաւ մեր հերոսներին, մի կողմը քաշեց նրանց և ամենաքաղաքավարի կերպով կամեցաւ մի բան հասկացնել. սակայն սրանցից մէկը, որի գլխին համեմատաբար դեռ մի փոքր խելք էր մնացել, և որի անունը Մարզար էր, փակեց ծերուկի բերանը և անհամար անգամ համբուրեցրեց նրա թշերը։

— Զէք տեսնում. այս մարդու բերանից ոսկի է թափվում, մարգարիտ,—ասաց Մարգարը։

Միւս տղերքը հետևեցին նրա օրինակին և սկսեցին համբուրել խեղճին։

Հանդիսականների մէջ բարձրացաւ անասելի ծիծաղ... մանաւանդ կանանց, որ սկսեցին ճղղալ։

Տանտէրը կարմրեց, զայրացաւ. նա հրամայեց, և երաժշտութիւնը լռեց։ Նրան ապրողվեց հարցնել։

— Ո՞վ էք դուք։

— Մակարներ,—պատասխանեցին նրանք։

— Ո՞ւմ հարսանիքի։

— Մեր թանգագին ընկեր դերձակ Մկրտիչի,—ասաց Մարգարը։

— Բայց դուք սխալ էք. սա իմ որդի ինժեներ Սամուէլի պսակն է։

Անկոչ մակարները, իբր թէ սաստիկ զարմացած, իրար երեսի նայեցին և հազար ներողութիւն խնդրելով գնացին իրանց չունեցած ընկեր Մկրտիչի հարսանիքը, չը մոռանալով մի վերջին բաժակ էլ նորից դարդակել ինժեներ Սամուէլի կենացը և եթէ տուն շինելու լինեն, անպատճառ նրան հրաւիրել։

Ալէք. Աբելեան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

«ԵՐԿԻՐ ՆԱԻՐԻ» ՇԱՐՔԻՑ

I

ԱՐԱՐԱՏԻՆ

(Ներքող)

Երկնասլաց ու թեթև
Նրբակապոյտ ծածկած մէջ
Դու հրեշտակ լուսաթև՝
Նիւթեղէն չես դու երբէք.
Հայոց արնոտ աշխարհի
Հոգին ես դու անարատ,
Հուրը յար թող հրահրի
Սէգ ճակատիդ, Արարատ,
Եւ աւերվող մեր սրտում
Եռայ անմար ու առատ,
Դու պահապան մշտարթուն,
Լուսակատար Արարատ...

Չեմ տեսել քեզ, բայց որպէս
Անուշ ցնորք իմ հոգում
Պայծառ ես դու, հրակէզ,
Հրապոյկ ու կանգուն—
Արդար դրօշ հայութեան,
Սիրոյ սեղան հրառատ,
Դու, իմ երկրի յարութեան
Անխաբ վկայ, Արարատ.
Որքան մնանք մենք նկուն,
Որքան խաւարն իջնի խոր,
Միրանաւոր, մեր հոգուն
Դու, պահապան զօրաւոր...

Որպէս երազ լուսեղէն
Ջինապայծառ ու շողուն՝
Դու, անխորտակ ապաւէն
Հրաճարակ մեր հոգուն,
Կանգնի՛ր, անկեալ ժողովուրդ,
Եւ հաւատա և տակա.
Կայ քո վշտում վեհ խորհուրդ
Եւ խաչվածին մահ չը կայ.
Պարզվիր պայծառ դէպի վեր,
Ցոլա հրով անարատ,
Երկրիս մոխիր ու աւեր
Դու՝ անմահ սիրա, Արարատ...

II

Կարծես թէ դարձել եմ ես տուն,
Բոլորն առաջվանն է կրկին.
Նորից դու հին տեղը նստում,
Շարժում ես իլիկը մեր հին։
Մանում ու հէքիաթ ես ասում,
Մանում ես անվերջ ու արագ,—
Սիրում եմ պարզկայ քո լեզուն,
Զեռներդ մաշված ու բարակ,
Նայում եմ, մինչև որ անզօր
Գլուխս ծնկիդ է թեքվում,
Նորից ես մանուկ եմ այսօր,
Դրախտ է նորից իմ հոգում.
Գետից բարձրանում է մշուշ,
Արևը հանգչում է հեռուում,
Իլիկդ խօսում է անուշ,
Հէքիաթդ անվերջ օրօրում...

III

Ցիշում եմ ինչպէս այն ուշ
Աշունն էր ոսկեորվում.
Մայրամուտն էր ժլատ վառվում,
Բլուրը պատել էր մուժ...

Մեր դիւղն է՝ սարերը մերկ,
Մեր գետը՝ բարակ միգում,
Ջանգակը՝ մեղմ ու քեկուն
Թափթփում են արօտ ու հերկ...

Եւ մայրս ահա հիւանդ
Մրսում է—արև ուզում.
Նստած է հեռու դրսում
Անխօս և մեղմ-հնազանդ։

Եւ ծեր է մայրս այնքան,
Փոքրիկ է—բարի մի մայր...
Ցոլում է սարը սուրսայր,
Երգում է զանգը լալկան...

Վահան Տէրեան

ՏԱՄԲՈՎ. — Արդէն անց են կացրել Սիբիր մօտ 40,000 դերի Աւստրիայի Պրեսմիշլի մօտից։

ՍՕՖԻԱ.—Բոլգարական գործակալութիւնը հերքում է այն տեղեկութիւնը, թէ Մաղուրեան լճերի մօտ տեղի ունեցած վերջին ճակատամարտից յետոյ Ֆէրդինանդ արքան և Վիլհելմ կայսրը փոխանակել են հեռագիրներ։

ՊԵՏՐՈԳՐԱԴ. — Ներքին գործերի մինիստրը մինիստրների խորհրդին ներկայացրեց առաջադրութիւն՝ յատկացնելու զինուորական ֆոնդից 3 միլիոն ռուբլի, որպէսզի այդ գումարը տրվի քաղաքային հասարակական և զեմսավային հաստատութիւններին վարակիչ հիւանդութիւնների դէմ մաքառելու միջոցների համար, եթէ տեղական գումարները պակասն կամ եթէ այդպիսի գումարներ բոլորովին չը կան։

Մարտի 26-ին Նորին Կայսերական Մեծութիւնը բաղդ ունեցաւ ներկայանալ հասարակական զեմստվային միութեան գլխաւոր լիազօր իշխան Լվովը։

Համաձայն վերաստուգիչ յանձնաժողովի տուեալների Կարմիր Խաչի ընկերութեան գլխաւոր վարչութեան գանձարկղում առ 1 սեպտեմբերի կար 21.233,032 ռ.։ Փետրվարի ընթացքում ստացվեց 2.802,659 ռուբլի, ծախսված է միևնոյն ժամանակամիջոցում 4.137,208 ռ. և առ 1 մարտի մնում էր 19.888,483 ռուբլի։

Լոնդոնից հեռագրում են. «Վաշինգտոնի կառավարութիւնը ամերիկեան քաղաքացիներից, որոնք ընակվում են Գերմանիայում, ստանում է տեղեկութիւններ, թէ նրանք դիմք ունեն անհանգստանալ իրանց վիճակի համար մօտիկ ապագայում։ Ընդ սմին շատ ամերիկացիներ մեկնում են Գերմանիայից»։

ԲՈԼԳԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

26 մարտի

ՍՕՖԻԱ.—Մամուլի բաժինը հրատարակել է հետեւեալը. «Սերբիական դիպլոմատիայի գործերը՝ վարկաբեկելու բոլգար կառավարութեան գործելակերպը մի միջադէպով, որ ծագեց Սերբիական Մակեդոնիայում առաջ եկած ապստամբութիւնից, լիակատար արդարութիւն կրեցին։

«Բոլգար կառավարութեան կողմէ, որ խիստ պահպանում է նա եւրոպական զինադադարի հէնց սկզբից, ըղխում է աւելի յայտնի կերպով Նիշի և Սոֆիայի կաբինէտների միջև՝ Վալանդովում տեղի ունեցած վերջին միջադէպերի առիթով կատարած գրութիւններից։

«Բոլգար կառավարութեան անբասիր գործելակերպի նոր ապացոյց հանդիսանում նրա կարգադրութիւնը՝ զինաթափ անելու բոլոր ապստամբներին, որոնք երեւում են զենքերով բոլգարական սահմանի վրա, և միջոցներ ձեռք առնելու նրանց դէմ համայն բոլգարական օրէնքների։

«Այդ կարգադրութիւնն արդէն գործադրված է։ Շատ ապստամբներ զինաթափ են եղած և ուղարկված են երկրի խորքը»։

ՍԵՐԲ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

26 մարտի

ՆԻՇ.— Ի պատասխանի մամուլի բոլգարական բաժնի հաղորդագրութեան՝ Սոֆիայի դէպքերի մասին, սերբիական «Պրէսսբիւրօն» հրատարակեց հաղորդագրութիւն, որի մէջ ասված է, թէ բոլոր հայդուկները, որ զինված էին, բայց հագել էին տարբեր տարբեր զէնք։ Սերբ զինուորներից մասը սպանվել կամ վիրաւորվել են «հայդուկներով, շատ դիակներ մնացել են այլանդակված։ Բուլգարական զորակները և ֆրանսիական դիակները լուսանկարել են այդ այլանդակված դիակները։ Հայդուկների դիակների մէջ գտնվել են վաւերաթղթեր, որոնցով երեւում է, որ նրանց թւում կային սերբիացիներ։ Այդ վաւերաթղթերը կը հրատարակվեն։ Բացի դրանից, հրոսակների մօտ գտնվել է բոլգարական զինուորական հագ։

Սերբիական բոլոր պահակ-զինուորները սրի քաշվել։ Կայարանը պաշտպանող զինուորները ստացան օգնութիւն և ետ մղեցին ապստամբներին։ Թիւրք ազգաբնակութիւնը ամբողջութեամբ ցոյց չը տուեց դիմադրութիւն, որովհետև նա սկզբից կամենում է պաշտպանել Թիւրքիայից։

Բոլգար կառավարութեան այն յայտարարութիւնը՝ թէ իբր ներկայ դէպքում նրանք վերաբերում է ազգաբնակութեան ընկված ապստամբութեան, բոլորովին սուտ է։ Սերբ կառավարութիւնը հրաւիրել է մի քանի գործակալների և մեծ հողերների խմբագրութիւններին անձամբ ներկայանալու՝ թէ ով է իսկապէս փորձել խարել Եւրոպային։

ԱՆԳԼԻԱՅԻ ԳԻՏՆԱԿԱՆԸ ԲՈԼԳԱՐԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Անգլիացի յայտնի գիտնական ակադեմիկոս Շարլ Բրէշ «Figaro»-ի մէջ անխնայ քննադատում է Բոլգարիայի քաղաքականութիւնը։

«Եւրոպայում կայ մի ազգ,—ասում է Բրէշէն,—որը 400 տարվայ ընթացքում ծառայել է Թիւրքերից, և որը այժմ, ըստ երեւոյթին, մոռացել է այդ տանջանքների մասին, որովհետև նա մասնակից է Թիւրքիայի դաշնակիցը դառնալ։ Այդ երկիրը Բոլգարիան է։

«Կայ մի ժողովուրդ, որը 50 տարվայ ընթացքում ենթարկվել է սիստեմատիկական կոտորածի. Թիւրքերը նրա հողը ներկել են արիւնով։ Անտարբեր Եւրոպան, որ զբաղված է եւրոպական հաւասարակշռութեանը պահպանութեամբ, որով նա այնպէս հպարտանում էր, չը բողոքեց։ Միակ ձայնը, որ հնչեց այդ ժողովրդի պաշտպանութեան համար, դա մեծ Գլադստոնի ձայնն էր, որ մենակ համարձակվեց բացարձակօրէն արտայայտել իր զղջանքը։ Եւ այժմ այդ ժողովուրդը պատրաստ է դուրս գալ Գլադստոնի ժառանգների դէմ։ Այդ ժողովուրդն է՝ Բոլգարիան։

«Եւրոպայում կայ մի ազգ, որը ամեն բանով պարտական է Ռուսաստանին, որը կազմում է գրեթէ Ռուսաստանի մասը իր լեզուով, կրօնով, իր սովորութիւններով, ազգ, որին Ռուսաստանը պաշտպանել է իր ուժեղ ձեռքով, որի համար Ռուսաստանը մղել է երկար և դժուարին պատերազմ և որը աղաւաղել է Ռուսաստանի ձեռքով։ Այդ ազգը այժմ պատրաստվում է դուրս գալ Ռուսաստանի դէմ, պատրաստ է դաշնակցել իր նախկին բռնակալների հետ։ Դա՝ Բոլգարիան է։

«Թող այդպէս լինի։ Հարկաւոր չեն ոչ շնորհակալութիւն, ոչ բնական իրաւունքներ, ոչ ժողովուրդների եղբայրութիւն։ Ընդունում ենք օրինաւորութիւնը միայն տուեալ բոլորի անկատարելի շահերի։ Թող Բոլգարիան առաջնորդվի միայն իր եսական շահերով, մոռանալով արդարութիւն և պատիւ։ Բայց լա՞ւ է հասկացել արդեօք նա իր շահերը։

«Նա գործելու ժամանակ է ընտրել, երբ Աւստրօ-Գերմանիան գրեթէ ճնշված է։ Բոլգարները, կուրացած՝ գերմանական ոսկիներով, ընկել են պարտվածի գիրկը, և նրանց սպառնում են սարսափելի աղէտներ։ Խեղճ Բոլգարիա։ Վաղը այլևս չի լինի Եւրոպական Թիւրքիան։ Վաղը կը լինեն միայն ազատ ժողովուրդներ և ազատագրված Եւրոպան առանձնապէս գթոտ չի լինի դէպի նրանց, որոնք կը դանդաղեցնեն նրա ազատագրութեան րոպէն։ Երիցս խե՞ղճ Բոլգարիա»։

91 ՄԻԼԻԱՐԴ ՐՈՒԲԼԻ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԾԱԽՔ

Անգլիայի վիճակագիր Էդգար Կրամմոնդ Լոնդոնի թագաւորական վիճակագրական ընկ. է ներկայացրել մի զեկուցում կուռ բոլոր պետութիւնների պատերազմական ծախքերի մասին, սկսած յուլիսի 18-ից, մի տարվայ ընթացքում։ Կրամմոնդը այդ ծախքերը հաշւում է 9,147 միլիոն ֆունտ ստերլինգ, ըստ օրում դաշնակիցներին բաժին է ընկնում այդ գումարից 4,870 միլիոն ֆ. ստերլինգ, իսկ թշնամիներին 4277 միլիոն ֆ. ստերլինգ։ Այս թւերը երկիրների վրա բաժանվում են այսպէս.

Բելգիան	526	միլ.	ֆունտ	ստերլ.
Ռուսաստանը	1400	»	»	»
Գերմանիան	2775	»	»	»
Ֆրանսիան	686	»	»	»
Անգլիան	1258	»	»	»
Աւստրիան	1503	»	»	»

Այստեղ դեռ չեն մտնում Եպպոնիայի, Սերբիայի, Թիւրքիայի և Չերնոգորիայի ծախսերը հաստատ տուեալների բացակայութեան պատճառով։

Բացի այդ ծախսերը՝ թէ այս պետութիւնները և թէ վերև յիշված մեծ պետութիւնները կրել են մեծ վնասներ, այն է՝ սեփականութեան կորուստ կամ քայքայում։ Դրանց թւում Բելգիան ունեցել է ամենամեծ վնասը, որ հասնում է 250 միլիոն ֆ. ստերլինգի, Ֆրանսիան՝ 160, Ռուսաստանը՝ 100, Աւստրիան՝ 100, իսկ Անգլիան ու Գերմանիան՝ ոչինչ գրեթէ։

Մի խօսքով այս բոլոր երկիրների՝ թէ արտաքին, թէ ներքին, թէ ռազմական, թէ անտեսական ծախսն ու վնասը հասնում է 91 միլիարդ ռուբլու։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԱՌՈՂ ՄԱՀՈՒՓՈՐՁ ԵԳԻՊՏՈՍԻ ՍՈՒԼԹԱՆԻ ԴԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

26 մարտի

ԼՈՆԴՈՆ.—Բէյտէրի գործակալութեանը հաղորդում են Կահիրէից.

«Ցերեկվայ ժամը 3-ին մի տեղացի մահափորձ կատարեց սուլթանի կեանքի դէմ այն րոպէին, երբ նա կառքով դուրս էր գալիս ալբանական պալատից մի քանի պաշտօնական անձանց այցելելու նպատակով։ Սակայն գնդակը վրիպեց և կրակողը ձերբակալվեց»։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

27 մարտի

ԹԷՀՐԱՆ. — Գլխաւոր զանձապահ Գէյնսէնսի հրաժարականը ընդունվեց կաբինէտի կողմից։ Գէյնսէնսը մնում է առայժմ մաքսատների անօրէն։

Պետական զանձարանի բելգիացի պաշտօնեաները բողոքեցին, որ կառավարութիւնը խախտում է պայմանագրերը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՑ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԵԾ ՐՕՊԷՆ

Վերջին նահանջից յետոյ մեր յաղթական զօրքը կրկին արշաւեց դէպի Թիւրքիա, ջարդուփշուր անելով Էնվէր և Սանդերս փաշաների զօր. ոյժն ու յոխորտանքը։

Ենթադրվում է, որ այս արշաւանքը վերջինը կը լինի և անվերադարձ։

Առաջին անգամը չէ, որ մեր յաղթական զօրքը արշաւել է մինչև Էրզրում և ամիսներ այնտեղ հաստատված լինելուց յետոյ, հարկան պետութիւնների նախանձոտ դաւերի շնորհիւ, վերադարձել է այնտեղից։

Եւ ամեն անգամ մեր զօրքի վերադարձը այն երկրից մի քանի տասնեակ հազար, նոյն իսկ հարիւր հազար հայերի փախստի պատճառ է դարձել իրանց հայրենիքից։

Հայերը զրկվել են իրանց հայրենիքից, ցիրուցան եղել աշխարհի զանազան ծայրերը և գաղթականութեան բնական հետեւանքով օչնչացել են, իսկ մեր պետութիւնն էլ զրկվել իրան համար ամենաօգտակար մի տարրից Փոքր-Ասիայում, որտեղ հայի ուժեղ լինելը անփոխարինելի է համարվում այժմ՝ հէնց ռուսական քաղաքականութեան տեսակէտից։

Թիւրքաց Հայաստանը ինձ ծանօթ է դեռ անցեալ (1877 թ.) ռուս-թիւրքական պատերազմի ժամանակից։ Այն ժամանակ, որքան էլ օսմ. պետութեան անկուլտուրականութեան կնքով և կաշկանդիչ պայմանների շնորհիւ ճնշված էր նոյն երկրի ժողովուրդը, սակայն նրա անխնջ աշխատութեան շնորհիւ՝ շէն ու լի էր երկիրը, որովհետև հայակերութեան քաղաքականութիւնը այնտեղ դեռ զգաթնակէտին չէր հասել։

Մանուկների օրօրոցները տասնեակներով էին լինում մի ընտանիքում, իւղի, մեղրի, ձէթի կարասները բաղմաթիւ, ցորենի հացերը և անասունները անհաշիւ էին։

Անցեալ պատերազմից յետոյ հայի քրիստոնեայ լինելը մեծ յանցանք համարվեց Թիւրքաց Հայաստանում, որովհետև յաղթող ռուս պետութիւնն էլ քրիստոնեայ էր։

Ամեն ջանք գործ դրվեց օսմ. պետութեան կողմից՝ հայերին օչնչացնելու համար, որ ռուս պետութիւնը հաւատակից և աջակից չունենայ այնտեղ։

Կարճ ժամանակում, Աբդիւլ-Համիդը աւերակ դարձրեց հայ աշխարհը, ցիրուցան եղան, վտարանդվեցին աշխարհաշէն հայերը իրանց պապենական աշխարհից։

Շատ գիւղեր բոլորովին դատարկվեցին հայերից, որոնց հողերին տիրեցին քիւրդերը, շատ գիւղերի էլ՝ քիւրդերը դրացի հաստատվելով խլեցին հայերից հողերը, տիրերին իրանց «ամարաթ» (կիսաճորտ) դարձնելով։

Շատ հասկանալի պատճառներով՝ մեր պետութեան օգտի տեսակէտից, հայը իր հայրենիքում պէտք է հաստատ օջախի, հողի տէր լինի։

Այժմ հասել է հայ ժողովրդի պատմական մեծ րոպէն, որ նա ուժեղ կերպով պաշտպանի ստանահար եղած իր իրաւունքը, եւ առնի իր սեփական հողը, իբրև իր գոյութեան առաջին միջոցը։

Ցիրուցան եղած հայերը այժմ պէտք է խմբվեն և քայլ առ քայլ հետեւեն մեր յաղթական բանակին, նախ նրան թիկունք և ոյժ լինելու և ապա իրանցից բռնի կերպով գրաւված հողերը ետ ստանալու համար։

Բօպէն նշանաւոր է և աջող, որ գուցէ այլևս չը կրկնվի։

Ամեն ջանք ու ճիգ պէտք է գործ դնել այս պատմական մեծ բոպէին օգտագործելու։

Մի քանի տասնեակ հազար, գուցէ և հարիւր հազար հայ զինուորներ ներկայումս պատերազմի դաշտում պետական կանոնաւոր զօրքերի շարքում կանգնած լինելուց բացի, բազմաթիւ հայ կամաւորներ էլ, անձնազոհ կերպով, խիզախում են պատերազմի դաշտում, որոնց քաջագործութիւնների մասին հիացմունքով պատմում են շատ բարեխիղճ ռուս օֆիցէրներ։

Պէտք է յարգվի և վարձատրվի այդպիսի զոհաբերութիւնը, որի ամենարժանի վարձատրութիւնը՝ նրանից բռնի գրաւված հողերի վերադարձնելը միայն կը լինի՝ առանց պատճառաբանութիւնների։

38 տարի ետ դառնանք։ Անցեալ ռուս-թիւրքական պատերազմից առաջ Սարիբեշ գիւղը ռուս-թիւրքական սահմանին կից՝ զուտ հայաբնակ էր, 60 անից բաղկացած. պատերազմից յետոյ, օսմ. պետութեան և քիւրդերի ճնշման տակ, ի թիւս շատերի, գաղթեցին և Սարիբեշի հայերը. սակայն ռէս Մարտիրոսը երկար ժամանակ պոկ չէր գալիս իր հայրենի օջախից, յուսալով թէ մի օր կիրակնանայ Բերլինի դաշնագրի հանրածանօթ 61-րդ յոդուածը, որի շնորհիւ Սարիբեշը կը բաժանվայ հայ դրացիներով։

Չիրականացաւ չարաբաստիկ այդ յոդուածը. ռէս Մարտիրոսն էլ գաղթեց, թողնելով քիւրդերին իր մենդատաւ հողերը և Կարսի շրջանում օրավարձ մշակութեամբ էր ապրեցնում իր ընտանիքը։

Նրա ժառանգներն էլ գուցէ այժմ մշակութեամբ են ապրում, եթէ դեռ բոլորովին չեն ջնջվել աշխարհի երեսից, որ յատուկ է գաղթականութեան ենթարկվածներից շատերին։ Սարիբեշը այժմ զուտ քիւրդաբնակ է։

Հարիւր հազարաւոր գիւղեր այդպէս դատարկվել են հայերից՝ Բասէնում, Ալաշկերտում, Բայազիդի հովտում, Արաղայում և միւս բոլոր նահանգներում։

Այդ բոնի գրաւված տեղերը անխօս կերպով պէտք է վերադարձվեն իրանց նախկին տէրերին, առանց է նկատի ունենալու՝ թէ այժմ ուրիշներն են ամրացել այնտեղ, թէկուզ մի քանի տասնեակ տարուց ի վեր։ Չէ որ հայի հալածանքն էլ նոյնքան հին է, որքան նրա հողի վրա ուրիշի ամրանալը։

Մեծ կալուածներ են խլված նաև հայ վանքերից, որոնք նոյնպէս վերադարձվելու են ըստ պատկանելոյն. օրինակ՝ Նոյեմուզ, Նազիկ և Բաթիկ գիւղերը 38 տարի առաջ պատկանում էին Իւչքիլիսէի (ս. Յովհաննու) վանքին, իսկ անցեալ տարի տեղեկացայ, որ յիշեալ կալուածներն արդէն պատկանում են մի ինչ-որ շէյխի. այսինքն վերջինը խլել է վանական կալուածները թիւրքական օյինբազութիւններով։

Թիւրքահայ փախստականների մեծ մասը տեղաւորվել է ռուսահայերի շրջանում և ապա միւս պետութիւնների մէջ։

Տեղացիները, սիրով ընդունելով փախստականներին իրանց մէջ, նեղացրել են իրանց դրութիւնը, ինչ տեսակէտով էլ լինի։

Արդարութիւնը պահանջում է, որ այժմ, օգտվելով նպաստաւոր հանգամանքից, վերտարանդվածները վերադառնան իրանց հայրենիքը և ազատվեն տեղացիների վրա ծանրութիւն լինելուց։

Դարձեալ կրկնում եմ, որ բոպէն թանգ է և նշանաւոր. մեծ ու անվերադառնալի կը լինի կորուստը, եթէ հայերը չը ձգտեն հայրենիք վերադառնալով տիրանալ իրանց հողերին։

Ահա միակ և կենսական խնդիրը, որ ներկայ պատերազմը պէտք է լուծի յօգուտ հայերի, որի աջողվելը կախված է հէնց իրանց հայերի գործելակերպից։

Այս խնդիրը խիստ բարդ է, սակայն անլուծելի։

Դրա համար հէնց ներկայումս, ամեն տեղ, ձեռնհաս անձերից, հագատաբ մարմիններ պէտք է կազմակերպվեն Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի հովանաւորութեան ներքոյ։

Այդ մարմինները պէտք է տեղեկութիւն ժողովեն, թէ ո՞րտեղ են թափառում հայրենիքից հալածված հայերը, թէկուզ մի քանի տասնեակ տարուց ի վեր եկածները, նրանց մէջ պրոպագանդա մղել և հայրենիք վերադառնալու գործը կազմակերպել։

Այդպիսիները քայլ առ քայլ պիտի հետեւեն մեր արշաւող բանակին և անմիջապէս տեղաւորվեն իրանցից գրաւված հողերի վրա։

Հակառակ դէպքում, շատ բանից կը զրկվեն, որովհետև երբ պետութիւնը տիրում է մի երկիր, ազատ հողերը նշանակվում են համապետական կալուածների շարքում և շահագործվում են յատուկ օրէնքներով, որոնց այլևս չեն կարող տիրանալ մասնաւոր մարդիկ, թէկուզ հէնց նախկին հողատէրերը լինեն դրանք։ Ց. Խոջաէյնաթեան

Ելենովկա

ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ՊԱՀԱՏԸ

Մոսկվացի յայտնի բարեգործ Պ. Ա. Շախով մի նախագիծ է մշակել Հաագայում Խաղաղութեան Պալատի շարքում կառուցել մի առանձին հսկայական պալատ, որը կոչվելու է Մարդկութեան Պալատ։ Կուլտուրական բոլոր գործերը, որոնք կը լինեն պատերազմից յետոյ, Շախովի կարծիքով, պէտք է արտաքին կերպով մարմնացվեն այդ պալատում, որպէս նշան համամարդկային գաղափարի։ Մարդկութեան այդ պալատը, գերմանական միլիտարիզմի խորտակումից յետոյ, հետամուտ է լինելու ժողովուրդների մէջ մշակութային խաղաղութիւն հաստատելու գործին՝ կուլտուրական արժէքները զարգացնելու և ժողովուրդներին ընդհանուր խնդիրների հողի վրա միացնելու ճանապարհով։ Այդ նախագծի առիթով Շախովը դիմել է Եւրոպայի և Ամերիկայի ականաւոր գործիչներին։ Մասնաւորապէս նա յոյս ունի ամերիկացի միլիարդէր Կարնեջիի վրա։ («Շ. Ֆ. Ж.»)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՐՔԱԼԻՍ

✦ Մեզ հաղորդում են, որ հայ կամաւորների նոր խմբեր կազմելու առիթով եղած բանակցութիւններն այն արդիւնքի են յանգել, որ այսուհետև կամաւորների ծախքերը հոգացվելու են կառավարութեան կողմից։ Դրանով հայ հասարակութիւնը հնարաւորութիւն կունենայ իր նուէրներն յատկացնել փախստականների համար։

✦ Երէկ Փոխարքայի ծննդեան օրվայ առիթով պալատական եկեղեցում Պիտերիմ արքեպիսկոպոսը կատարեց զոհաբանական մաղթանք, որին ներկայ էին փոխարքայի օգնականները, գեներալ Վոլակին և այլ բարձրատիճան անձինք։

✦ Փոխարքայ կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկով ընտրված է Ղրիմ-Կովկասեան լեռնային ակումբի պատուաւոր անդամ։

✦ Այրի տ. Փեփրոնիա Զարդեղեանը ներկայացրել է տիկ. Աննա Զարդեղեանի միջոցով «Նուէր մանուկներին» ընկերութեան վարչութեանը («Հասկեր» ամսագիրը) գրաւոր յայտարարութիւն, որով նուիրաբերում է ընկերութեանը իր սեփական այգին, որ գտնվում է Թիֆլիս քաղաքի հարաւարեւելեան կողմը, Սօղանլուխ կոչված գիւղատեղում, Կուր գետի աջ ափին, ի յիշատակ իր հանգուցեալ ամուսին Մեսրոպ Զարդեղեանի։

✦ Հանգուցեալ Յարութիւն Զահրաբեանի յիշատակը յաւերժացնելու համար Ներսիսեան դպրոցի նրա նախկին սաների մի խումբ որոշել է, բացի պակիս, կազմել մի գումար նրան յարգողների նուիրատուութիւններից յօգուտ պատերազմից վնասվածների։ Խնդրվում է նուիրատուութիւնները ուղարկել Հայ Ուսուցչական Կոմիտէին, Գայիանեան դպրոց, Սարգիս Աբովեանին։

✦ Այսօր տեղի կունենայ Ներսիսեան դպրոցի ուսուցիչ Յարութիւն Զահրաբեանի թաղումը Խօջիվանքի գերեզմանատունը Վանքի եկեղեցում թաղման կարգ կատարելուց յետոյ։

✦ Ինչպէս երէկ հաղորդեցինք, Կարսի և Երեւանի շրջանների փախստականներին փոխադրում են Բօրչալուի գաւառի կայարանները։ Այդ պատճառով Սանդաբ կայարանն են մեկնել փախստականներին ընդունելու համար Հայկ. Կենտրոնական Կոմիտէի երկրորդ լիազօր Ս. Խանոյեան և 3 հոգի վերահսկիչներ։

✦ Հայկ. Կենտրոնական Կոմիտէը փախստականների համար Սանդաբ կայարանն է ուղարկել մի վագոն ալիւր, աղ և շաքար։

✦ Կովկասի քաղաքների միութեան բիւրոն ստացել է զանկան ընծաներ՝ Բաքուի քաղաքային վարչութիւնից 129 պուդ և Կուշչենի ստանիցայից 84 պուդ՝ փախստականներին բաժանելու համար։

✦ Առաջնակարգ բեստորաններ և առկոմբինատներում բուֆետներ պահողները պատրաստակամութիւն են յայտնել երէկվայ իրանց եկամուտներից 5% յատկացնել յօգուտ Կենտրոնական Կոմիտէի պատերազմից վնասվածների համար։

✦ Թանգութեան մասին երկրորդ խորհրդակցութիւնը նշանակված է ապրիլի 1-ին, քաղ. վարչութեան մէջ։

✦ Երկուշաբթի, մարտի 30-ին, քաղ. դումայի նիստ չի լինի։

✦ Թիֆլիսի երկաթուղային քաղ. դպրոցը վերածված է բարձր տարրականի։

✦ Գրական-Գեղագիտական Սալոնի զատկական կարարէն, ուրբաթ, անցաւ շատ ուրախ։ Ներկայ էր մեծ թւով երկսեռ երիտասարդութիւն, որը նախորդ օրը Նպաստամատոյցի հանգանակութեան մասնակցել էր։ Պարեցին, երգեցին և խաղացին մինչև գիշերվայ ժամը 1-ը և ցրվեցին ուրախ տրամադրութեան տակ։ Հետեւեալ հերթական jour fixe-ին կը դասախօսէ Ս. Կաստեան Յունաստանի ազատագրութեան սկզբնաւորութեան մասին։

✦ Երէկ Հայոց Ազգագրական Ընկերութիւնը շնորհաւորական հեռագիր ուղարկեց Մոսկվայի Կայսերական Հնագիտական Ընկերութեան, նրա 50-ամեայ արդիւնաբեր գործունէութեան յոբելեանի առիթով։

✦ Թիֆլիսի վաճառականական բանկի վարչութեան զեկուցումից երեւում է, որ բանկի գործառնութիւնը անցած տարի հասել է 422.026.397 ռ. 79 կոպէկի։ Բանկի ակցիոներները դիվիդենտ ստանում են 250,000 ռուբ. կամ 12 ռ. 50 կ. իւրաքանչիւր 250 ռ. արժեցող ակցիայից, այն է՝ 5%։

✦ Մենք ստացանք երկրագործութեան գլխաւոր վարչութեան հրատարակած «Труды съѣзда хлопководовъ въ гор. Тифлисѣ 1—6 нояб. 1912 г. томъ II, часть II» գրքի մէջ տպված են Կովկասում գործող գիւղատնտեսների և հասարակ. գործիչների համագումարում արած զեկուցումները, որոնց թւում և հայ գիւղատնտեսների՝ հանգուցեալ Ալ. Քալանթարի, Կ. Խաչիսեանի, Մ. Վերմիշեանի, Տէր-Օհանեանի, Յ. Աթաբէգեանի, Մ. Ղազարոսեանի, Ա. Երիցեանի, Գ. Մուրադեանի, Ա. Թամամշեանի, Ա. Դիլանեանի, Ա. Աթանասեանի, Կ. Տէր-Գրիգորեանի, Զ. Մանասարեանի, Գ. Աղաբաբեանի, Ա. Տէր-Վարդանեանի, Ս. Մաղասեանի, Ս. Տէր-Մարտիրոսեանի և Ս. Սահրատեանի զեկուցումները,

ԿՈՎԿԱՍ

✦ Զեմստվային դաշնակցութեան Անդրկովկասի կոմիտէը ուժեղացնում է բժշկական օգնութեան գործը Խոփայում և հիւանդանոց է կազմակերպում Արդուինում։

✦ Բաստովի քաղ. կոմիտէը Կովկասեան բանակի համար ուղարկել է 1000 պուդ զատկական ընծաներ։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Արտիստական Թատրոն

Բարատովի և Գոլենսկիի խումբը, որ վերսկսել է իր ներկայացումները Զատկից յետոյ Արտիստական Ընկ. Թատրոնում, գրաւում է Թատրոնը տնտիպ բազմութիւն և ոչ մի բազմաթոռ պարապ չէ մնում։ Գլխաւոր ուշադրութիւնը գրաւում են Վիկտոր Պէտիպա, Բարատով, Իւրենէվ դերասանները և Ժիխարէվա, Քալանթար դերասանուհիները։

Մարտի 25-ին դրված «Արծուիկ» (L'Aiglon) դրամայի մէջ Վիկտոր Պէտիպան, որ խաղում էր «Արծուիկի» կամ Նապոլէոնի որդու դերը, կարելի է ասել, ամբողջովին հմայեց Թատրոնը իր տաղանդաւոր և գեղեցիկ խաղով, մանաւանդ այն տեսարանի մէջ, երբ նա արտասանում է «Ես 20 տարեկան եմ» տասնաւորը։ Շատ լաւ էր և Բարատովը, որ կատարում էր Ֆլամբոյի դերը։ Նոյնչափ մեծ տաղանդով խաղաց Վիկտոր Պէտիպան Դոստէվսկիի վէպից փոխադրված «Ապուշ» պիէսի մէջ գլխաւոր հերոսի՝ «ապուշի» դերը։ Այդ պիէսը ներկայացվեց ուրբաթ, մարտի 27-ին։ Դերասանուհի Ժիխարէվան, որ խաղում էր Նաստասիա Ֆիլիպովնայի դերը, ահագին աջողութիւն ունեցաւ։ Առ հասարակ, ամբողջ խումբը կազմված է ձեռնհաս օյժերից, և մենք դրանով ենք բացատրում, որ բոլոր ներկայացումները մեծ աջողութիւն են գտնում։ Հ. Ա.

—

Ժողովրդական Տուն

Աւելի տաղտկալի պիէս, քան «Երեկոյեան Շեփորը», որ ներկայացվեց ուրբաթ երեկոյեան, մենք չենք տեսել։ Միակերպ, մոնոտոն, գործի հետ կապ չունեցող խօսակցութիւններ՝ ձանձրալի և յոգնեցնող։ Մանաւանդ տարօրինակ էր այն, որ գործող զօրականների (պիէսը գերմանական զինուորական կեանքից է) հագուստը միջնադարեան խանութի էր ներկայացնում։ Այսպէս, օրինակ, բոլոր զինուորականների շալվարը կարմիր գոյնի էր, ֆրանսիական սաղարտիական և այլն։ Իսկ սենեակների կահաւորութիւնը ամենևին գերմանական չէր։ Իսկ դերակատարների խաղի մէջ գերմանական շունչ ու ոգի երբէք չէր նկատվում, բացառութեամբ Ամօ-Խարազանի խաղի, որը յարգելի դերասանը տարաւ շնորհքով, և վերջում, երբ իր արտաւորված պատուից ամօթանաք գնդակահարեց աղջկան, ազգող տպաւորութիւն թողեց։ Բնական էր նրա խաղի մէջ վիրաւորված հոր և վիշտը, և զայրոյթը, մանաւանդ տպաւորիչ ու արտայայտիչ էր նրա խաղը այն ժամանակ, երբ զղջման ցաւով դրկեց իր ձեռքով սպանված աղջկայ գլուխը։ Այդ տեսարանը մեզ յիշեցրեց նկարիչ Ռեպինի հռչակաւոր այն նկարը, ուր Իոան Գրոզնին զղջումով գրկում է իր ձեռքով սպանած որդու գլուխը և սեղմում կրծքին։

«Երեկոյեան Շեփոր» պիէսը ինքն ըստ ինքեան անարժէք մի գրուածք է, բայց այս վերջին տեսարանը, կրկնում ենք, տպաւորիչ էր, շնորհիւ պ. Ամօ-Խարազանի խաղի։

Մեւս դերակատարներից լաւ էին պ. պ. Երամեան, Սերժ և մի երկու հոգի, որոնց անունը չը գիտենք, որովհետև Թատրոնում այդ երեկոյ ծրագիրը չէր վաճառվում։ Այս էլ մի բացառիկ նորութիւն է։

Թատրոնը լիքն էր։ Ս. Ր.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 27 մարտի

Հայ Դերասան. Ընկերակցութիւնը մինչև հիմա լուռ, զոհանալով միայն կրկնակի և կարճ հաւաստիացումներով, սպասելով Հայ Գրական Ընկերութեան վճռին ուր դիմել էր պ. Լէօն, ի պաշտպանութիւն իր, հեղինակի, շահերի և օրէն յանձնել ելնելք և մենք այս գործի քննութիւնը, յայտնելով մեր պատրաստակամութիւնը՝ կանգնեցնելու «Մելիքի աղջկայ» ֆիլմերի ցրումը, պայմանով որ ըստ կարելոյն շուտ տրվի վճիռը, ի նկատի առնելով որ, յետագայում, նոյն իսկ արդար դուրս գալու դէպքում, անդարմանելի կը լինէր մեր կորուստը, եթէ վաղօրօք նշանակված օրը չը կարողանայինք ըստ կարգին ներկայացնել այդ պիէսան։

Հայ Գրական Ընկերութեան վարչութիւնը, յարգելով մեր խնդիրը, յատկապէս հրաւիրված երկու իրաւաբանների խորհրդակցութեամբ, երկու օրվայ նախնական քննութիւնից յետոյ, որոնց մասնակցել էր և ինքը՝ պ. Լէօն, երբ ուրբաթ, մարտի 30-ին, պէտք է վերջնական քննութիւն անէր և տար իր վճիռը, յանկարծ պ. Լէօից ստանում է նամակ, որով նա յայտնում է, թէ «արգելում է այլ ևս իր դատով զբաղվել»։

Այնուհետև երևաց «Кавк. Сл.»-ի № 66-ի «Թողոքը» ատարագրութեամբ մի խումբ՝ հասարակութեան ծանօթ անձնաւորութիւններ, որոնք, սակայն, պարտաւոր էին ևս առաւել զգոյշ լինել իրանց անունից օգտվելիս և չը պէտք է ենթարկվէին զբաղարտութիւններին։

Ուրեմն, չէ կարելի այլ ևս լռել և թողնել, որ այդպէս անխղճօրէն ստնտակ արվեն քան հայ դերասանների պատիւը և շահերը։

Մեզ մեղադրում են երկու բանում. առաջինը՝ որ առանց հեղինակի թոյլտուութեան շահագործել ենք նրա աշխատանքը։ Իսկ երկրորդ՝ որ փոխադրութիւնը և բեմադրութիւնը կատարվել է անբարեխիղճ, հակագեղարուեստական, նոյն իսկ «կապտիա» ձևով։

Առաջին մեղադրանքի դէմ ընդում ենք ահա պ. Լէօի փետր. 12 թ. նամակը ամբողջութեամբ.

«Սիրելի պ. Արմէնեան.

«Ձեր նամակն ուշ ստացայ, այնպիսի մի ժամանակ, երբ մինչև ներկայացման սկիզբը մնում էր դուցէ 3—4 ժամ։

«Նախ քան օրիորդ Շողյեանի փոխադրութեան բեմ հանելը, ես կը կամենայի տեսնել, թէ ինչպէս են բարեփոխված այն տեղերը, որոնք իմ կարծիքով թոյլ էին, հերոսներից մի երկուսի հոգեբանութեան անհամապատասխան։ Բայց երբ դուք գրում էք, թէ փոխադրութիւնը ձեզ միանգամայն գոհացրել է, ես միանգամայն վերջացած եմ համարում այդ հարցը, քանի որ ձեր հեղինակութիւնը ինձ համար ևս շատ բարձր է բեմին վերաբերեալ գործերի մէջ։ Նոյնպէս ձեր և ա. Սիրանոյշի անուններն են, որ ինձ իրաւունք չը տուին դժգոհութիւն յայտնելու, որ գրուածքիս փոխադրութիւնը բեմ է հանվել առանց նախապէս իմ համաձայնութիւնս ստանալու։ Մընում է իմանալ, թէ ի՞նչ աջողութիւն էք ունեցել փետր. 10-ին։ Հեղինակի իրաւունքս էլ, ի հարկէ, կը յարգէք։

«Սեղմում եմ ձեր ձեռքը։

«Ցարգանքով Ա. Բաբախանեան»։

Այս նամակը ստացվել էր, ի պատասխան իմ նոյն փետր. 7 թ. նամակի, որով յայտնում էի, թէ պէտք է ներկայացնենք «Մելիքի աղջիկը» օր. Եղոյեանի փոխադրութեամբ, որը նախօրօք տեսել էր պ. Լէօն եւ տուել իր համաձայնութիւնը, յանձնարարելով մի քանի փոփոխութիւններ մտցնել. որ օրիորդը, ըստ պ. Լէօի ցուցմունքի, կատարելով այդ բարեփոխութիւնները, ցանկացել է կրկին ուղարկել պ. Լէօին, սակայն ժամանակը կարճ լինելով՝ ես ինձ վրա էի վերցնում համեմատեան և բեմադրութեան պատասխանատուութիւնը, յոյս տածելով որ յարգելի վիպագիրն էլ, ինչպէս սովորաբար մեր թատերագիրները, կը վստահանայ իմ փորձառութեանն ու ճաշակին։

Եւ աւելացնում էի, ի միջի այլոց, որ այդ պիէսան պիտի ներկայացնենք, մեր տարեկան ընթացքին, նաև Թիֆլիսում, Ատրախանում, Նոր-Նախիջևանում և այլ գաւառական քաղաքներում։

Պ. Լէօի վերոյիշեալ նամակին ի պատասխան, երկրորդ գրութեամբ յայտնում եմ, որ «հեղինակի իրաւունքը» նա պիտի ստանայ օր. Եղոյեանից, ըստ սովորութեան և օրէնքի, և ըստ նրանց մէջ նախօրօք կայացած խօսակցութեան։ Դրա վրա, պ. Լէօից ստանում եմ մի օրում երկու հեռագիր. առաջինը՝ «մնդրում եմ ուղարկել իմ հօնորարը», երկրորդը՝ «Պիէսի մասին օչ մի համաձայնութիւն չէ կայացած, ճանաչում եմ միայն ձեզ. եթէ վաղը չը ստանամ լրիւ բաւարարութիւն, ձեռք կառնեմ իմ միջոցները»։

Մենք, մինչև այսօր, Բագուի վեց ներկայացումներից վճարել ենք հօնորար 475 ր. օր. Եղոյեանին, որը իր հաշիւը պիտի տեսնէ պ. Լէօի հետ (իսկ օրիորդը, ինչպէս հասատ գիտենք, պ. Լէօին ներկայացրած է այդ գումարի կէսը՝ որպէս վէպի հեղինակի բաժինը)։

Դրանից մի շաբաթ յետոյ է միայն որ պ. Լէօն, մի երկրորդ նամակով, գանգատվելուց յետոյ իր քիչ ստանալիքի մասին, նոր միայն հարց է բարձրացնում պիէսի «անբարեխիղճ» փոխադրութեան և բեմադրութեան մասին. կոչում է պայմանագիրը մի այլ փոխադրութեան համար՝ մի այլ խմբի հետ, այնուհետև ուղարկում է բողոքներ, գրում է անլուր վիրաւորական մեղադրանքներ, դիմում է ազմինխուռաթիվ միջոցների, հրաժարվում է ինքնելիգենտ մարդկանց միջև կատարվող վայելուչ բանակցութիւններից և... այսօր ամենայնիւ դիմում է հասարակական խղճին։

Եւ «հասարակական խիղճը» 20—25 հոգու բերանով ահա արտայայտվում է «Кавк. Слово»-ի № 66 սամ...

Գանք ուրեմն այդ «խղճի» երկրորդ մեղադրանքին, մեր գեղարուեստական աշխատանքի դէմ արված մեղադրանքին։

Նախ՝ որտեղից կարողացան արդեօք կարծիք կազմել այդ մասին, քանի որ անծամբ չեն տեսել ոչ մէկը մեղադրողներից. ոչ իրանք, ոչ էլ հէնց ինքը պ. Լէօն։

Բայց տեսնենք թէ ինչ են ասում լրագրական քննադատութիւնները։

«Արև» №34.—«Մելիքի աղջիկը մեր թատերական գրականութեան մէջ անշուշտ աջող դրամաներից մէկը կարելի է համարել թէ իր ամբողջ կառուցուածքով, թէ իր պարզ տեսարաններով և, որ գլխաւորն է, իր դիրքը բռնելիությամբ։ ...Մի առանձին ներքին բաւականութիւն է պատճառում թատերասէր հասարակութեան։ ... Բեմի վրա մէկ-մէկու հետից պատկերանում է հայ կեանքը՝ իր պարզ անպաճոյճ տեսարաններով և ընական գոյներով։ ...Նա հեռու է արհեստական տենդենցներից և վիպական մանրամասնութիւններից, որոնցով այնքան հարուստ է մեր փոխադրված թատերական երկերի մեծագոյն մասը։ ...Ներդաշնակութիւնը և յատուկ ինամքը դէպի պիէսայի աջողութիւնը՝ աչքի էր ընկնում։ Արթաւր։

«Баку» № 33.—Լիքը դահլիճը մեծ ուշադրութեամբ հետևեց դրամայի ամբողջ ընթացքին։ Պէտք է նկատել, որ Ղարաբաղի մելիքների ժամանակակից կենցաղավարութիւնը ընորոշ կերպով դուրս է բերված և արեւելեան կոլորիտը տալիս է ամբողջ բեմադրութեան կենդանութիւն և փայլ։ Պիէսան դրված էր աջող։ Նկատելի էր մեծ աշխատանք, համեմատաբար կարճ ժամանակին։ Бат. (տիկին Բահաթրեան)։

«Баку» № 50.—«Մելիքի աղջիկը» հինգերորդ անգամ ունեցաւ ահագին աջողութիւն... Չենք ուզում ասել, որ պիէսան ինքը արժանի չէր իր վայելած ընդունելութեանն։ Ի հարկէ ոչ։ Բայց ունենալու համար այն աջողութիւնը, որին նա լիովին արժանի է, հարկաւոր էին այն բեմական պարագաները, որանց գլուխ Արմէնեանը Մայլովների թատրոնում։ Ճիշտ է, արված էին ահագին ծախքեր, բայց աջողութիւնը արդարացրեց այդ ծախսերը։ Х—евъ (Խ. Վերմիշեան)։

Ուրիշ էլ ինչ էր հարկաւոր արդեօք մի թատերական գրուածքի աջողութեան ու արժանիքի համար։

Թողնում ենք հասարակութեանը դատել։

Այժմ դիմում ենք նրանց, որոնք ստորագրել են «Кав. Сл.»-ի «Թողոքը», հետևեալ հարցով. արդեօք, այս փաստերից յետոյ, պարտականութիւն չե՞ն համարի՝ նոյնպէս հրապարակաւ ետ վերցնել իրանց ստորագրութիւնը այդ բողոքի տակից։

Ի դիմաց հայ դերասան. ընկ.՝

Ա. Արմէնեան

Գ. Գ.—Մէջ բերված բոլոր դոկումենտների շեղատառ շարված մասերի ընդգծումներն իմ են։ Ա. Ա.

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Թիֆլիսի ժամերով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է՝

№ 3 դէպի Բաթում 1 ժ. 45 ր. ցերեկ.
№ 4 » Բագու 7 ժ. 3 ր. երեկ.
№ 6 (արագ) » 12 ժ. 8 ր. ցերեկ.
№ 9 » Բաթում 8 ժ. 53 ր. երեկ.
» Ջուլֆա 10 ժ. 23 ր. երեկ.
» Բօրժոմ 3 ժ. 20 ր. ցերեկ.

ԺԱՄԱՆՈՒՄ Է ԹԻՖԼԻՍ՝

№ 3 Բաղուից — 13 ժ. 54 ր. ցերեկ.
№ 4 Բաթումից— 5 ժ. 55 ր. երեկ.
№ 5 Բաղուից (արագ) 7 ժ. 41 ր. երեկ.
№ 10 Բաթումից— 9 ժ. 51 ր. առաւ.
Ջուլֆայից — 6 ժ. 53 ր. առաւ.
Բօրժոմից — 7 ժ. 25 ր. առաւ.

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1011. НАЗАРЯНЦЪ Михайловскій проспектъ (ц.) 50—18

Ց. ԴԱՂԲԱՇԵԱՆԻ

Լիակատար քառարանները (ՌՈՒՍ-ՀԱՅ, գ. 8 ր., կազմ. 9 ր., ՀԱՅ-ՌՈՒՍ գ. 6 ր. կազմ. 6 ր. 50 կ.), Ստոյգ հայոց պատմութիւնք (Ա. պր. գ. 50 կոպ.), Ռուսերենի դասագիրքն եւ ինքնուսոյցներն, և Աշխարհաբարի քերականութիւնը (գ. 50 կ.)։ Ծախվում են իր մօտ՝ Тифлисъ, Московская ул. № 13, кв. 6. 197. 2—1

10 ԿՕՊԵԿ

քառակուսի սաժէնը՝ ծախվում են Թիֆլիսից 45 վերստ իսկ կախէթեան երկ. գծից 2 վերստ հեռաւորութեան վրա գտնվող Թօխլիսուրի գիւղում անկախին տոգիչ հողամասեր, նոյնպէս և անտառամասեր։ Նոյն տեղը վաճառվում է նաև 30 դեսեատին անտառ փայտ պատրաստելու համար։ Տեղեկանալ՝ I Тумановская ул. № 13, Յովհ. Զ. Տէր-Մատիասեանից։ (ц.) 180. 2—2

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Ա. ՎԱՀՇԵՆՑԻ ծախքով լոյս ընծայեց

ՆԻՒԹԵՐ ՀԱՅ ՄԵՂԻՔՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Բ. ՊՐԱԿԸ՝

ԴՕՓԵԱՆՔ և ՄԵԼԻՔ-ԾԱՀՆԱԶԱՐԵԱՆՔ

Գրեց Կարապետ Եպիսկոպոս։

Գինն է 50 կոպէկ։

«Նիւթերի» Ա. պրակը՝ Դիզակի Մելիքութիւնը Առաքել վարդապետի արժէ 30 կոպ.։

Դիմել՝ Въ Армянское Этнографическое О-во. Тифлисъ. 173. 6—3 (ц. հ.)

Հայոց Ազգագրական Ընկերութիւնը

Տիկ. Հ. Մարտիրոսեանի նուիրած գումարով

ԼՈՅՍ ԸՆԾԱՑԵՑ

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐ ՀԱՅ ԲԱՆԱՀԻՒՍՈՒԹԵԱՆ

Գ. գիրքը.

Էջմիածնի գաւառի՝ Ապարանի շրջանում Ե. Լալայեանի գրի առած հէքիաթները։

«Մարգարիտների» Ա. և Բ. գրքերը նոյնպէս պարունակում են Էջմիածնի գաւառի՝ Վաղարշապատ, Օշական, Աշտարակ և Փարպի գիւղերում Ե. Լալայեանի գրի առած հէքիաթ.։

Իւրաքանչիւր գրքի գինն է 1 ռուբլի։

Դիմել՝ Въ Армянское Этнографическое О-во. Тифлисъ. (ц.հ.) 144. 6—6

ՀՕՆՕՐԷԱ

ունենալու դէպքում, թէ սուր և թէ խրոնիքական բնաւորութեան, նոյնպէս և նրա հետևանքների ժամանակ պէտք է ընդունել

„ԱՐՄԱՏԻՆ"

դեղը։ «Արմատինը» միանգամայն անվնասակար է օրգանիզմի համար և աջողութեամբ կարող են գործադրել թէ տղամարդիկ և թէ կանայք։ «Արմատինը» գործածելու ժամանակ չէ պահանջվում ոչ մի սրսկումն, լուացումն, խարումն, խողովակի լայնացումն և այլն։ Կատարելապէս բուժվելու համար պիտի գործադրել 6 արկղիկ։

«Արմատինի» 1 արկղիկը արժէ 1 ր. 75 կ.։

Վաճառվում է դեղատներում եւ դեղավաճառանոցներում։

Կեղծիքներից խուսափելու համար՝ պահանջեցէք միայն Ա. Ե. Ակուլանցի «Արմատինը», սապաթաղկի էտիկէտով։

(ц. կ.) 174. 0—2

ՄԻ ՆՈՐ ԶԵՌՆԱՐԿ ՀԻՊՆՈՏԻԶՄ ԵՒ

ՆՈՐ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

ՍՈՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԱՌԱՆՑ ՈՒՍՈՒՑՉԻ

Լոյս տեսաւ ՑՈՒՐՈՒԹԻՒՆ ՅԻՋԻԷՐՉԵՆՆԻ

«Մարդկային մտքի քաջագործութիւնը կա

գործնական հոգեբանութիւն» ձեռնարկը։

Այս նոր Ձեռնարկով ամեն ոք, ով հայերէն լեզուին ծանօթ է, կ
րող է սովորել հիպնոզացնել. ներշնչել և սովորել նոր հոգեբանութիւն,
գործադրել նրան իր ամենօրեայ գործերում։ Այս նոր Ձեռնարկի արժէքը
ուրիշ բացատրութիւնների համար պիտի դիմել նամակով հետեւեալ հասցէ

Ռուսաստանից—Сусаннѣ Шекерджянъ, Вельяминовская
№ 22, Тифлисъ. Արտասահմանից—Sousanna Shekerjian, 22 Weliaminovskaya, Tifl
(ц.) Caucasus, Russia. 106. 35—4

Թիֆլիսի Առեւտրական Նաւարդիւնաբերական Ը

կերուրեան Վարչութիւնը

սրանով խնդրում է պ. պ. բաժնետէրերին ներկայ լինել

ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ,

որ տեղի կունենայ, ներկայ 1915 թ. ապրիլի 19-ին, առաւօտեան ժամը 11-ին, Թիֆլ
Բօրսայի շինութեան մէջ (Պուշկինսկի փող. № 5)։

ԶԲԱՂՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ.

1) Վարչութեան զեկուցումը.
2) Վարչութեան զեկուցումից առաջացող հարցերի վճիռը.
3) Վերաստուգող յանձնաժողովի զեկուցումը.
4) Քննութիւն և հաստատութիւն 1914 թ. հաշիւ և հաշուեկշռի.
5) 1915 թ. ի ծախքերի նախահաշիւը և գործունէութեան նախագիծը.
6) Կարգաւորումն 1914 թ. օգուտների.
7) Վարչութեան մէկ անդամի ընտրութիւն՝ ի տեղի հերթով հեռացող անդամի, վարչութեան մէկ անդամի թեկնածուի ընտրութիւն.
8) Վերաստուգող յանձնաժողովի 5 անդամների ընտրութիւն.

Եթէ ընդհանուր ժողովը չը կայանայ, պահանջված ձայների թիւի պակասութի
պատճառով, այդ դէպքում երկրորդ ժողովը կը նշանակվի մայիսի 5-ին 1915 թ. ն
տեղում, առաւօտեան ժամը 11-ին, որպիսի ժողովը կը համարվի օրինական՝ օրքան
դամ էլ ներկայ լինի։

Վարչութիւնը պ. պ. բաժնետէրերի ուշադրութիւնն է հրաւիրում Ընկերութի
կանոնադրութեան § 59-ի վրա։

Անուանական ակցիաների տերերը օգտվում են Ընդհանուր ժողովում ձայների իր
ւունքով միայն այն դէպքում, եթէ նրանք, գոնէ 7 օր առաջ մինչև Ընդհանուր ժողո
օրը՝ մուծված են վարչութեան մատեանների մէջ, որի համար և Ընդհանուր ժողո
մասնակցելիս չէ պահանջվում ներկայացնել անուանական ակցիաները։

Ակցիաները ներկայացնողին ձայնի իրաւունք է տրվում այն դէպքում, եթէ ն
ակցիաները ներկայացված են Ընկերութեան վարչութեանը՝ գոնէ 7 օր առաջ մինչև
հանուր ժողովի օրը և յետ տրված մինչև ժողովի աւարտը։ Բնագիր ակցիաների փո
բէն կարելի է ներկայացնել վկայագրեր (ստացագրեր) ակցիաներն ի պահեստ կամ գ
դրված լինելու համար ինչպէս պետական, նոյնպէս և կառավարութեան հաստատած
նօնների հիման վրա գործող կրէդիտային (տեղական և օտար քաղաքների) հիմնարկ
թիւնների, այլ և արտասահմանեան կրէդիտային հիմնարկութիւնների և բանկային ան
կողմից ստացված, որոնք ընտրված կը լինեն բաժնետէրերի Ընդհանուր ժողովներից
հաւանութիւն գտած ֆինանսների մինիստրութիւնից։ Վկայագրերի մէջ պէտք է նշան
ված լինեն ակցիաների համարները։ Արտասահմանեան բանկային հիմնարկութիւնն
որոնց վկայագրերը կարելի է ներկայացնել փոխարէն բնագիր-ակցիաների, պէտք է ն
նակված լինեն Ընդհանուր ժողովի հրաւէր-յայտարարութիւնների մէջ։

Միաժամանակ վարչութիւնը վաղօրօք յայտնում է պ. պ. բաժնետէրերին, որ ձ
իրաւունք ունենալու համար տրված հաւատարմագրերը և գրաւոր յայտագրերը պէտ
ներկայացված լինեն վարչութեանը բաժնետէրերի Ընդհանուր ժողովից 7 օր առաջ
վարչութեան գրասենեակին, ցեր. ժամը 11—1 ը։ (12, 19) 187. 3—

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

ԻՆԺԵՆԵՐ

Տ.Ա. ԲՈՒԴԱՂԵԱՆԻ

Բագու, Կրասնօվոդսկայա փ. տ. Ասան-Իւզբաշեանցի։ Հեռախօս № № 23-49, 23-

Առաջարկում է ամբողջ Կովկասի և Պարսկաստանի համար խսկապէս Դիզել շար
ժիչներ (մոտորներ) յայտնի ԿՕԼՕՄԵՆՍԿԻ ընկ. մեքենայագործարանից։

Հօրիզոնական անդիլական շարժիչներ, (մոտորներ) «ԿՐՕՍՍԼԷԳ» ընկերութեան
մեքենայագործարանից «Դիւրացրած Դիզել» սիստեմի, որ գործ է ածվում նաւթի
բոլոր տեսակներով. նաւթի ծախսն է մի ժամում ամեն մի այժին 1/2 ֆունտ կա
200 գրամմ։

Գազային շարժիչներ, որոնք բանում են թէ բնական և թէ գեներատորային
գազով։

Ջրհան և ջրմուղ մեքենաներ (նասոսներ)։

Ջրի շարժիչներ (տուրբինաներ)։

Սառոյց պատրաստող մեքենաներ «Ֆէէնիկս» ընկ. գործարանից։

Ամեն տեսակ էլեքտրական մեքենաներ և պիտոյքներ յայտնի «Դինամո» ընկ
գործարանից։

Երկրագործական մեքենաներ՝ լոկոմոբիլներ, ցորեն մաքրող մեքենաներ, տրաք
տորներ և այլն՝ յայտնի ամերիկեան «ԿԷՅՍ» (Case) ընկեր. գործարանից։

Մեծ ճանապարհի վրա աշխատելու համար ԱՒՏՈՄՕԲԻԼՆԵՐ նոյն ամերիկ
կան «ԿԷՅՍ» (Case) ընկերութեան գործարանից։

Վերոյիշեալ տեխնիքական գրասենեակը իր վրա է վերցնում զանազան գոր
ծարաններ սարքել և գործի գցել իր միջոցներով՝ ինժեներներով և վարպետներով։

Դիմել՝ Баку. Техническая Контора Т. А. БУДАГЯНЦЪ.

Արտասահմանից՝ Bacou (Russie) Bureau Technique T. A. Boudaguian, Ingénieu
(ц.կ.) 551. 0—83

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лоирсъ-Меликовская улица, домъ казенный.